Հարցվածների 37.8%-ն ասել է, որ Հայաստանը պետք է Ռուսաստանի հետ ռազմադաշնակցային հարաբերություններ ձեւավորի, 18.3%-ի կարծիքով՝ ԱՄՆ-ի հետ, 17.5%-ի կարծիքով՝ Իրանի, 15.9%-ի կարծիքով՝ Եվրամիության երկրների, իսկ 5.4%-ի կարծիքով՝ Հնդկաստանի հետ: ՌԴ-ի նկատմամբ անվստահությունը հետզհետե մեղմանում է:

Կարդացեք՝ էջ 4

Պետք է տեղական վճարների եւ տուրքերի այնպիսի համակարգ ստեղծել, որտեղ գործում է «Շատ աղտոտողը շատ է վճարում, քիչ աղտոտողը՝ քիչ» սկզբունքը: Այս մոդելը մերժում է համահարթեցումը: Կառավարությունը, քաղաքապետարանը պետք է անկախ մշտադիտարկման հնարավորություն տան գիտնականների, բժիշկների, լրագրողների խմբերին:

Կարդացեք՝ էջ 6

Այդ հայտարարությունը նշանակում է մի բան. նա Ալիեւին ասել է՝ ինձ պաշտպանեք, ֆինանսավորեք, երաշխավորեք իմ անվտանգությունը, փող տվեք, որ ես կարողանամ թիկնապահներ վարձեմ այդքան շատ, ոստիկաններին մեծ, ահռելի աշխատավարձեր տամ, եւ ես կանեմ այն, ինչ դուք ցանկանում եք: Ալիեւը, վստահ եմ, չի մերժել Փաշինյանին:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 181 (4083), 13 նոյեմբեր, հինգշաբթի, 2025

www.hraparak.am

Երեկ խորհրդարանի հերոսն Անդրանիկ Քոչարյանն էր, որի պատճառով, կարելի է ասել, բյուջեի քննարկման բնականոն ընթացքը տապալվեց, քանի որ սահմանված ընթացակարգով պարտադիր ելույթ ունեցողների մեջ էր նաեւ նա, սակայն իր ելույթի ժամանակ նիստերի դահլիճում չէր: Նրա բացակայության փաստն իրարանցում առաջացրեց դահլիճում, քննարկմանը ներկա Փաշինյանն էլ նյարդային տեսքով ինչ-որ բան էր խոսում նստած տեղից, եւ նիստը վարողը ստիպված եղավ 20 րոպե ընդմիջում հայտարարել, բայց ընդմիջում հայտարարելուն պես Քոչարյանը մտավ դահլիճ, սակայն նիստն այլեւս չշարունակեցին: Փոխարենը Քոչարյանը մեղավոր դեմքով մոտեցավ Փաշինյանին, որի ձայնը թեպետ լսելի չէր, բայց դեմքից երեւում էր, որ հանդիմանում է նրան, մոտավորապես այն տեսքով, թե դու ով դարձար, որ արհամարհեցիր մեզ: Եվ, ինչպես սպասվում էր, հետո «քեն քշեց». ընդմիջումից հետո, երբ ելույթ էր ունենում Անդրանիկ Քոչարյանը, նա տեւական ժամանակ չէր վերադառնում նիստերի դահլիճ, չնայած Քոչարյանը ներողություն խնդրեց իր պատճառով առաջացած անախորժ իրավիճակի համար եւ ինքն էլ իր հերթին «բոչկա գլորեց» ԱԺ քարտուղարության վրա, թե՝ դուք պարտավոր էիք իմ ելույթից առաջ նախապես ինձ տեղեկացնել, եթե տեսաք, որ դահլիճում չեմ: Միայն Քոչարյանի ելույթի վերջում Փաշինյանը վերադարձավ դահլիճ:

Այսօր լրանում է ՀՀ ԶՈՒ հոգեւոր ծառայության կազմավորման 25 ամյակը: Հայ եկեղեցում ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունը ստեղծվել է 1997 թ. նոյեմբերի 13-ին, Գարեգին Ա կաթողիկոսի եւ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ: Այդ ժամանակից սկսած՝ զորամասերում ծառայություն են մատուցում նաեւ քահանաները՝ զինվորներին հասու դարձնելով հոգեւոր կյանքին: Այդ առիթով Քանաքեռի Սուրբ Աստվածածին եկեղեցում այսօր վաղ առավոտյան պատարագ է մատուցվելու, որին բանակի հոգեւոր առաջնորդ Մովսես վարդապետ Սարգսյանի գլխավորությամբ այլ հոգեւորականներ էլ են մասնակցելու: Սակայն մինչեւ երեկ պարզ չէր՝ արդյոք այդ պատարագին մասնակցելու է պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, որը կարգալույծ արված քահանայի կողմից Հովհաննավանքում մատուցվող պատարագին մասնակցել էր եւ ծնկաչոք հաղորդություն ստացել նրանից: Մեզ պատմեցին, որ բանակում հոգեւոր ծառայություն մատուցող քահանաները Քանաքեռի եկեղեցում պարբերաբար պատարագ են մատուցում եւ բազմիցս հրավիրել են նախարարին, բայց նա երբեք չի մասնակցել:

Քանդելու ձեւը գտել է

Պետական տարբեր համակարգեր քանդել-ապամոնտաժելու գործընթացը տարբեր կերպ է արվում: Մի դեպքում նախարարությունները միավորում են ու կառավարության կամայական կառուցվածք ստեղծում, որտեղ սուպերնախարարություն կոչվածները չեն աշխատում: Ասենք՝ գյուղատնտեսության նախարարությունը վերացնում են՝ գյուղով զբաղվող 2 վարչություն մտցնում էկոնոմիկայի նախարարության մեջ, իսկ էկոնոմիկայի նախարար նշանակում մի շոումենի, ՔՊ-ական քարոզչի, որն ամբողջ օրը լայվերով ու իշխանական քարոզչությամբ է զբաղված: Գիտությունների ակադեմիան լուծարում են՝ դարձնում հիմնադրամ, գիտության ու բուհերի կառավարումն էլ հանձնում Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի, այսինքն՝ Սարգիս Հայոցյանի տնօրինությանը, որն արդեն 5 տարի է՝ պաշտոնավարում է՝ 20 թվից, բայց այս տարիներին գեթ մեկ դրական կարծիք չենք լսել նրա մասին: Համակարգը քանդելու լավագույն ձեւն ապաշնորհ մեկին այդ համակարգի գլխին կարգելն է, որ մի քանի ամսում գործող կառույցից միայն հիշողությունը մնա, եւ մարդիկ երանի տան նախկին ղեկավարին: Ընդամենը եկեք հիշենք, թե քանի կառույց է այս իշխանությունը նման ձեւով հողին հավասարեցրել: Մենք առաջ էլ գոհ չէինք ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանից, բայց Վահագն Խաչատուրյանի համեմատ նա նախագահի էտալոն էր: Քննչական կոմիտեի նախկին նախագահ Արգիշտի Քյարամյանով, ԱԱԾ տնօրեն Արմեն Աբազյանով, գլխավոր դատախազ Արթուր Դավթյանով էլ հիացած չէինք, բայց նրանց իրավահաջորդներն ուղղակի կատաստրոֆա են: Նույն սկզբունքով ՔՊ-ն ոչնչացրեց մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, Սահմանադրական դատարանը, Հանրային խորհուրդը՝ դրանց բոլորի գլխին անդեմ կամակատարներ նշանակելով: Նույնիսկ տեսչական մարմինների ղեկավարներն այսօր մի քանի կարգ զիջում են նախորդներին:

Որ Հայաստանում մեկ անձի իշխանություն է, ու Նիկոլ Փաշինյանն է բոլորի փոխարեն որոշումներ կայացնում, իսկ իշխող ֆրակցիան էլ, իրենցից մեկի բնորոշմամբ՝ ուսապարկերի հավաքածու է, հայտնի է վաղուց: Սակայն պարզվում է՝ Նիկոլ Փաշինյանը կառավարում է նաեւ իր թիմակիցների անձնական կյանքը: Մեզ պատմեցին, որ նա արգելել է իր թիմակիցների ապահարզանները: Վերջերս թիմակիցներից մեկը նրան տեղեկացրել է, որ նման որոշում է կայացրել՝ ուզում է բաժանվել կնոջից եւ նոր կյանք սկսել: Փաշինյանն արգելել է անել դա, մոտավորապես այն պատճառաբանությամբ, որ ՔՊ-ում արդեն լրացրել են ապահարզանների լիմիտը, եւ այլեւս ոչ մեկն իրավունք չունի բաժանվել, որ հանրության աչքում էլ ավելի չընկնեն: Չէ՞ որ հիմա ինքը բարքերի ոստիկանի դեր է ստանձնել եւ հոգեւորականներին բարոյականության դասեր է տալիս:

ՆՄԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԲՈԼՈՐՆ ԵՆ ԳՐԵԼ

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի քննադատություններին ի պատասխան, Փաշինյանը խոստացավ մինչեւ տարեվերջ հրապարակել բանակցային փաստաթղթերը, որոնք արդեն «սկանավորվում են», ձեռքի հետ էլ փորձեց շանտաժ անել. «Նաեւ քո գրած մի նամակ եմ մեջը դնելու, որ չմտածես՝ առ եմ համարում»: «Առ եմ համարում» արտահայտություն հայերենում, ի դեպ, չկա: Երեկ ԱԺ-ում տված ճեպազրույցի ժամանակ Փաշինյանից հետաքրքրվեցինք՝ ի՞նչ նամակի մասին է խոսքը: Նա չցանկացավ փակագծեր բացել, միայն ասաց, որ նամակը ոչ թե իրեն էր ուղղված, այլ՝ մեկ այլ երկրի ղեկավարի, եւ հիմա ինքը հանձնարարել է «գաղտնազերծման գործընթաց» սկսել, եւ նամակը բանակցային փաստաթղթերի փաթեթի հետ անպայման կհրապարակվի: Որոշ տեղեկություններով, խոսքը ՌԴ նախագահին ուղղված նամակի մասին է, որը Սերժ Սարգսյանը գրել է 2016-ին՝ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ: Կցկտուր տեղեկությունների համաձայն, Սերժ Սարգսյանն այդ նամակում ռազմական աջակցություն է ակնկալում ՌԴ-ից՝ նշելով, որ մեր ռազմական բալանսը խախտված է: Սակայն հակառակ թիմում վստահ են, որ ոչ միայն երրորդ, այլեւ ՀՀ բոլոր նախագահները հանուն բանակի եւ հանուն Հայաստանի, նույնաբովանդակ գրագրության մեջ են եղել տարբեր պետությունների առաջնորդների հետ: Ի դեպ, Փաշինյանն ասաց նաեւ, թե ինչու մինչ այժմ չի հրապարակել բանակցային փաստաթղթերի փաթեթը, որի առաջարկը նախկին նախագահներն անում են շարունակ: Ասաց, որ պատահական չի ընտրվել տարեվերջը, իր կարծիքով՝ դա կարող էր անել միայն ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարումից հետո:

BREAKFAST

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ԿԻՆԸ «ԱՂՈԹՔ-ՆԱԽԱՃԱՇ» ԱՆՈՒՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՆ ԲԵՄԱԴՐԵԼ

Նոյեմբերի 14-ին եւ 15-ին Երեւանում նոր սկանդալային միջոցառում է տեղի ունենալու, որը կազմակերպվել է Նիկոլ Փաշինյանի նախաձեռնությամբ՝ Աղոթք-նախաճաշ՝ Christian Prayer Breakfast, որի գաղափարը վերցրել են ԱՄՆ ավանդույթներից, որտեղ համարում են, որ միասին աղոթք անելը, մարմնական եւ հոգեւոր սնունդ ընդունելն օգնում են մարդկանց, անկախ քաղաքական, կրոնական եւ այլ հայացքներից, կարեւոր հարցերով ճիշտ որոշումներ կայացնել:

Բնականաբար, հայաստանյան իրականության մեջ այս գաղափարը խեղաթյուրվում է գոնե այն պատճառով, որ հոգեւոր միջոցառումն անցկացվելու է Երեւանի կենտրոնում՝ Ազգային պատկերասրահում եւ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում, իսկ դրանից քիչ հեռու՝ «Երեւան Կենտրոն» ՔԿՀ-ում խղճի բանտարկյալներ են պահվում, այդ թվում՝ եկեղեցու սպասավորներ: Միջոցառմանը լինելու են հրավիրյալ մասնակիցներ, որոնց ծախսերը հոգալու է ՀՀ կառավարությունը: Մյուսները, ովքեր իրենց ցանկությամբ են գալու, իրենք են հոգալու իրենց տրանսպորտի ու հյուրանոցի ծախսերը: Առաջին օրը Ազգային պատկերասրահում պանելային քննարկումներ են տեղի ունենալու, ամենեւին ոչ հոգեւոր թեմաներով՝ բիզնես եւ էթիկա, արհեստական բանականություն, խոսելու են Թրամփի ճանապարհի մասին՝ որպես միջազգային խաղաղության եւ բարգավաճման ուղու, «Կանայք, անվտանգություն եւ խաղաղություն» թեման է շոշափվելու, Աննա Հակոբյանի սիրած՝ ընտանիքի, հավատքի մասին են խոսելու եւ այլն: Իսկ հաջորդ օրը «Արմենիա Մարիոթում» 10.00-13.00-ն կայանալու է բուն աղոթքի նախաճաշը, հետո մարդիկ գնալու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Էջմիածնի թանգարան, երեկոյան էլ՝ Երիտասարդական թատրոն:

Որքան էլ զարմանալի է, միջոցառման մասին, որին մասնակցելու են բազմաթիվ հրավիրյալներ՝ արտասահմանյան երկրներից, որեւէ պաշտոնական տեղեկություն չկա. ոչ մի հաղորդագրություն, ոչ մի իրազեկում, ոչ մի լուսաբանում՝ գոնե իշխանական ՁԼՄ-ների կողմից, չհանդիպեցինք: Միայն արտասահմանցի գործիչներն են որոշ մտահոգիչ տեղեկություններ հաղորդում: Ամերիկացի հայտնի իրավաբան, Սամվել Կարապետյանի միջազգային փաստաբանական թիմի անդամ Ռոբերտ Ամստերդամը, օրինակ, գրում է. «Հայաստանում տեղի կունենա աղոթքի նախաճաշ, եւ ես ուզում եմ, որ հասկանաք՝ աղոթքի նախաճաշ տեղի կունենա այն ժամանակ, երբ իմ հաճախորդ Սամվել Կարապետյանը գտնվում է բանտում, արքեպիսկոպոսները բանտարկված են, հոգեւորականները բանտարկված են, երկրի առաջնորդը փորձում է ճեղքել Եկեղեցին՝ մասնակցելով պատարագներին, որոնք կազմակերպվում են հեռացված քահանայի կողմից, մարդու, որը հայտարարել է, որ պատրաստվում է հեռացնել Եկեղեցու առաջնորդին: Այս մարդուն պատվում են ամերիկացի քրիստոնյաները Երեւանում, Հայաստանում»:

Քաղաքագետ-իրավաբան, ամերիկաբնակ Ռոբերտ Մարգարյանն էլ այս միջոցառման մասին մանրամասներ պարզելու համար փորձել է մասնակցության հայտ թողնել եւ բացահայտել է կապը «Կրթվելը նորաձեւ է» շարժման հետ: Պարզվում է՝ «Աղոթքի» կազմակերպիչը, որը պատասխանում է միջոցառման պոտենցիալ մասնակիցների նամակ-հայտերին, վարչապետի կնոջ՝ Աննա Հակոբյանի ղեկավարած այդ շարժման կազմակերպիչ-նախագահ, քաղաքագետ Ստեփան Սարգսյանն է՝ ծնունդով ԱՄՆ-ից: Նա երկար ժամանակ ապրել է Արցախում, Քաշաթաղի վարչական ղեկավարն է եղել, նաեւ ԱՀ նախկին ԱԳ նախարար Մասիս Մայիլյանի թիմից, այսինքն՝ սորոսական շրջանակներին առնչվող: ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը նրան ազատել է աշխատանքից, եւ նա մեկնել է ԱՄՆ, ներկայացել է որպես ընդդիմադիր գործիչ, որը տառապում էր Արցախի հանձնման ցավով, ու շատերը նրան ընդդիմադիր համարելով, նույնիսկ օգնության գումարներ էին տալիս: Այս մանրամասներն է պարզել Ռոբերտ Մարգարյանը: «Հետո բոլորը զարմացան, որ նա նիկոլական է, որ նստում է Աննայի ու Նիկոլի կողքին, նրանից իմ ընկերները փորձել են բացատրություն վերցնել, բայց նա ոչ մի հարցի չի պատասխանել ու հեռախոսակապը նրանց հետ կտրել է»,- պատմում է Մարգարյանն իր «լայվում» եւ կոչ անում՝ հարամել միջոցառումը: «Այս միջոցառման հիմնական նպատակը Եկեղեցու դեմ սկսված արշավին միջազգային երանգ եւ լեգիտիմություն փոխանցելն է: Ինչպես են կազմակերպելու Էջմիածին այցելությունը՝ առանց բախումների եւ խնդիրների, կարծում եմ, հետաքրքիր կլինի»,- ասում է Ռոբերտ Մարգարյանը: Իր յութուբյան ալիքում նա հետաքրքիր մանրամասներ է բացահայտում:

Աղոթքի նախաճաշի հրավիրյալների թվում է Դենիս կամ Դիդի Լագոսենը (Dede Laugesen), որն աշխատում է ԱՄՆ-ում, Կոլորադոյում գրանցված «Փրկեք հալածված քրիստոնյաներին» (Save the Persecuted Christians) անունով ՀԿ նախագահն է: Այս ՀԿ-ն ակտիվորեն պայքարում է հանուն քրիստոնյաների, եկեղեցականների իրավունքների, իսկ անցյալ տարի լայն քարոզչություն է տարել արցախցիների իրավունքի պաշտպանության ուղղությամբ՝ բարձրացնելով արցախցի ռազմագերիների հարցը, նաեւ բարձրաձայնել է այնտեղ ոչնչացման ենթակա հոգեւոր կոթողների հարցը, եւ Դիդի Լագոսենը ներառված է միջոցառման կազմկոմիտեի մեջ:

Ստացվում է, որ հալածյալ քրիստոնյաներին պաշտպանող կառույցը մասնակցում է այդ քրիստոնյաների սրբազաններին բանտ նետողների, նրանց մի բառի համար կալանավորողների եւ հալածողների միջոցառմանը: Սա տիկին Լագոսենին եւ նրա կառույցը վարկաբեկելու, փչացնելու, արցախցիների հարցերն ԱՄՆ-ում բարձրացնող կառույցի հանդեպ անլուրջ վերաբերմունք ձեւավորելու քայլ է, եւ չի բացառվում, որ արվում է որպես հերթական նվեր Ալիեւին:

«Մտածված կերպով մոտեցել են այս կառույցին, որը լուրջ աշխատանք է կատարել Ադրբեջանին դատապարտելու, արցախահայությանը տեղահանելու կապակցությամբ: Եվ այս կառույցին լռեցնելու համար փորձել են նրանց սիրաշահելով՝ ներառել իրենց ցանցի մեջ»,- հաղորդում է Ռոբերտ Մարգարյանը: Իհարկե հայտնի չէ՝ նրանք կգա՞ն Հայաստան, թե՞ ոչ: Չի բացառվում,

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԻ ՆՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ՆՇԱՆԱԿԵԼ ԵՆ, ՈՐ ՆՈՐ ՏԱՐԱԾՔՆԵ՞Ր ՀԱՆՁՆԻ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը նշանակում է արել. «Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Սահմանապահ զորքերի մասին» օրենքի 4.1-ին հոդվածի 1-ին մասի, Գարիկ Մուրադյանին նշանակել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի հրամանատար»: Բանակին առնչվող շրջանակներից ասում են, որ այս նշանակումը պատահական չէ: Մեզ պատմեցին, որ ժամանակին Արցախում կռված՝ Մարտակերտի հրամանատարներից է Գարիկ Մուրադյանը, որը պարտությունը, հող հանձնելը ծանր է տարել եւ Տավուշի մարզում Ադրբեջանին տարածքներ հանձնելու նախօրյակին իր վերադասին հայտարարել է, որ ինքը հող չէ: «Իր վերադասին հավատացրել էր, որ ինքը տարածք հանձնող չի: Ասում էր՝ կռված տղա եմ: Շատ մարդկանց ներկայությամբ, նաեւ Նոյեմբերյանում է ասել՝ ինքը նոյեմբերյանցի է, թե ո՞նց կարող է իրեն թույլ տալ հայրենիքից տարածք հանձնել, բայց իրականում ինքը վերջում խելոք հրահանգները կատարեց, ու երբ իրեն հարցրել էին՝ բա ասում էիր, թե մի միլիմետր հող չկա տալու, բա ո՞նց խելոք հրահանգը կատարեցիր, ասել էր՝ դե, ինձ սահմանապահ զորքերի հրամանատարի պաշտոնին են ներկայացրել, կոպիտ ասած, խաղից հելնում եմ: Ցավալին այն է, որ սրա նմանին նշանակել են, որ Վերին Ոսկեպարը, Բերքաբերի այն հատվածը, Այգեհովիտի հատվածը, Կայարանի հատվածը, Տավուշի մարզում ինչքան տեղ կա, սիրուն հանձնի: Ինքն արդեն սովորել է հանձնելուն, համակերպվել է դրա հետ, երեւի մի երկու կոմպրոմատ էլ դրել են դիմացը, պաշտոնն էլ տվել են, ասել են՝ պիտի հանձնես»,- ասաց «Հրապարակի» աղբյուրը:

Սակայն սա դեռ ամբողջը չէ: Գարիկ Մուրադյանը եղել է Նոյեմբերյանի գնդի հրամանատարը, երբ Բաղանիսի ու Ոսկեպարի տարածքները զիջել են Ադրբեջանին, նրա պատասխանատվության տակ է ընթացել այդ գործընթացը, քանի որ այդ տարածքները եղել են նրա գնդի վերահսկողության տակ: «Ինքն էլ ամբողջ օրը լծվել էր պայմանագրային զինծառայողներին համոզելու գործին, որ խաղաղություն է, հանուն խաղաղության պիտի հանձնենք այս տարածքները: Այդ դիրքերում ժամկետային զինծառայողներ չկային, միայն պայմանագրայիններ կային: Նրանց էլ տարբեր տեղերից հավաքել, բերել էին: Տղերքը սկզբում բոլորն ասում էին՝ ախպեր, սա էլ որ հանձնենք, շրջվենք, կտեսնենք, որ մեր տներին ենք հասնում ոնց որ, ինչ ուզում ես՝ անեն, մենք մեզ թույլ չենք տա: Հետո, չգիտես ինչի, բոլորը համաձայնեցին, ու այդտեղ մեծ է իր՝ Գարիկ Մուրադյանի դերը. ինքն է համոզել, իրեն բերել են, որ հանձնի»,- շեշտեց մեր աղբյուրը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ «ՄԱՆՐԻՑ» ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ Է

ԱՆԿԱԽ ԴՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, արդեն մի քանի օր է՝ կրկին քաղաքական օրակարգ է բարձրացել անկլավների հարցը: Պաշտոնական Բաքվից օրեր առաջ հիշեցրին, որ անկլավների հարցն իրենց մշտական ուշադրության կենտրոնում է, այսինքն՝ հայեր, չկարծեք, թե մոռացել ենք դա, ինչին մի քանի օր անց Փաշինյանն արձագանքեց իր էջում՝ հետեւյալ գրառմամբ. «Սահմանազատման արդյունքում մենք պետք է վերադարձնենք Արծվաշենը եւ ՀՀ մյուս օկուպացված ինքնիշխան տարածքները», որը, Փաշինյանի քաղաքական ընդդիմախոսների կարծիքով, իրականում ոչ թե Արծվաշենը հետ բերելու, այլ Տիգրանաշենը հանձնելու մասին է, որի պատճառների մասին մեր նախորդ հրապարակումներում անդրադարձել ենք:

Ուշագրավ է, որ պատերազմից հետո էլ Փաշինյանը բառացիորեն հայտարարում էր, որ Արծվաշենը մերն է, բայց «ՀՀ տարածքում դե յուրե անկլավներ չկան», եւ պնդում էր, որ իրենց ուսումնասիրությունների արդյունքում եկել են նման համոզման, իսկ եթե կան անկլավներ, ապա կսպասեն Ադրբեջանի կողմից իրավական հիմքերին:

Թե ինչու է Փաշինյանը կրկին հետ կանգնել իր նախորդ հայտարարություններից եւ նորից հիշել Արծվաշենը, մեզ ասում են՝ Բաքվից են ճնշում, որ հնարավորինս շուտ պետք է լուծել անկլավների հարցը, քանի որ իրենք վստահ չեն, որ 2026-ին Փաշինյանի իշխանությունը կվերարտադրվի ընտրությունների ճանապարհով, ուստի ուզում են ստանալ այսօր՝ անհապաղ: Փաշինյանն էլ, ի պատասխան, շրջանառության մեջ է դրել Արծվաշենի հարցը՝ միաժամանակ վստահեցնելով, որ չի հրաժարվում անկլավների թեմայից: Երեկ խորհրդարանում հարցուպատասխանի ժամանակ ամենապոպուլյար հարցն անկլավների թեման էր: «Չի կարող ՀՀ որեւէ ներկայացուցիչ, որեւէ վարչապետ հրաժարվել ՀՀ ինքնիշխան տարածքից, այսինքն՝ ՀՀ տարածքային ամբողջականությունը վերականգնելու օրակարգից»,- ի պատասխան՝ ասաց Փաշինյանը եւ վստահեցրեց, թե իր վերը նշված գրառումն ընդամենը այդ ամենի հաստատումն էր: Այդ ամենը, ըստ Փաշինյանի, պետք է արվի սահմանազատման ճանապարհով. «Մենք ասել ենք, որ արդեն իսկ մեր գրավոր ստանձնած պարտավորություններին հավատարիմ ենք եւ բացառում ենք որեւէ ուժային սցենար: Ինչ վերաբերում է սցենարներին, ապա սահմանազատում պետք է տեղի ունենա: Սահմանազատման արդյունքում պետք է վերաարձանագրվի Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա երկրների տարածքային ամբողջականության ուրվագիծը: Երբ այդ ամենը կվերականգնվի, այդ ժամանակ արդեն մնացած բոլոր կոմբինացիաները եւ վարիացիաները կքննարկվեն: Գիտեմ, որ քննարկվում է, որ Արծվաշենի դեպքում ավելի լավ է այլ սցենարների գնալ: Որեւէ մեկը չի կարող այլ սցենարի գնալ՝ առանց ՀՀ ժողովրդի կամքի արտահայտման»:

Ըստ նրա՝ եթե խոսք գնա տարածքի փոխանակման մասին, ապա հստակ է, որ առանց ՀՀ քաղաքացիների դիրքորոշման, այսինքն՝ հանրաքվե անելու, դա հնարավոր չէ անել: Մենք հետաքրքրվեցինք՝ արդյո՞ք Ադրբեջանից ստացել են անկլավների իրավական հիմքերը, ինչին իրենք սպասում էին, եւ հիմա ինքը կարող է հստակ ասել, որ Հայաստանում կան ադրբեջանական անկլավներ, թե՞ ոչ, հակառակ դեպքում ինչպե՞ս է անկլավների հարցի լուծման սցենարներից խոսում: Փաշինյանը բացասական պատասխան տվեց, ասաց, որ չեն ստացել, ապա մատնեց, թե ինչ հիմքով կարող են հանձնել Տիգրանաշենը: «Այն, որ 1991 թվականին մեր անկախությանը նախորդող շրջանում Հայաստանի Հանրապետության տարածքում եղել են կոնկրետ գյուղեր, էդ գաղտնիք չի, էդ գյուղերի մի մասն Իջեւանի շրջանում են, եւ ես էդ գյուղերի միջով անցել-գնացել եմ, ես չեմ կարա ասեմ՝ բնության մեջ էդպիսի բան չի եղել, որ Հայաստանում ադրբեջանցիներ են ապրել»: Մեր դիտարկմանը, թե Արցախում էլ հայեր էին ապրում, հիմա էլ՝ Գլենդելում են ապրում, դա նշանակում է, որ դրանք հայկական անկլավնե՞ր են, նա պատասխանեց. «Ես խոսում եմ սահմանազատման գործընթացի մասին, Սինգապուրում էլ են հայեր ապրել, բայց ես խոսում եմ սահմանազատման գործընթացի մասին»:

Դիտարկմանը, թե այդ դեպքում ինչպես է ասում, որ Հայաստանի տարածքում կան ադրբեջանական տարածքներ, պատասխանեց, որ այդտեղ միայն անկլավների թեման չէ, ուրիշ թեմաներ էլ կան: «1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա մեր տարածքային ամբողջականությունները պատկերացնելով, մենք ունենք խնդիր, որ մեր տարածքներն են օկուպացիայի ներքո, եւ որ իրենց տարածքներն են օկուպացիայի ներքո: Որպեսզի ես հիմա Ձեր հարցին պատասխանեմ, պետք է սահմանազատում իրականացնեմ, ես նկատի ունեմ կամայական տարածք, որ ընկնում է այդ կարգավիճակի վրա, հիմա աչքաչափով կարող ենք ասել՝ ինչի մասին է խոսքը, բայց դա լավ ժանր չի, որովհետեւ մենք, իրավական պրոցեսը թողած, մտահանգումների ենք գալու»:

Արձանագրենք, որ Տիգրանաշենը վերցնելու մասին ադրբեջանական կողմը խոսում է պատերազմի ավարտից սկսած, վերջերս անգամ հայտարարություններ են հնչում, որ ադրբեջանական այդ տարածքը «հայերն օկուպացրել են», իսկ ՀՀ պաշտոնյաներն այլեւս ոչ թե հերքում են դրանց ասածները, այլ խոստովանում եւ համաձայնում: Արցախ հայերի վերադարձի իրավունքը պաշտպանելը նաեւ սրա համար էր հարկավոր, որ արդարացողը ոչ թե մենք լինեինք, այլ՝ նրանք: Որ պահանջատեր լինեինք, ոչ թե շարունակաբար հանձնող:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՔԵՐՈԲՅԱՆԸ, 90 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՊԻԿԸ, ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ՝ «ՀԱՆՑԱՎՈՐ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ» ԱՆԴԱՄՆԵՐ

Մի քանի օր առաջ Քննչական կոմիտեն հերթական շոուն էր բեմադրել. էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի տանը խուզարկություններ արեցին, այնուհետեւ նրան ձերբակալեցին: Լուր տարածվեց, թե այդ ձերբակալությունը կապ չի ունեցել Քերոբյանի պաշտոնավարման ժամանակահատվածի հետ: Այժմ էկոնոմիկայի նախկին նախարարը մեղադրվում է շուրջ 17 տարի առաջ տեղի ունեցած ինչ-որ գործարքի մեջ, որի հետ կապված՝ ՔԿ-ն վարույթ է հարուցել: Վահան Քերոբյանին մասնավորապես մեղսագրվում է հանցավոր կազմակերպությանը մասնակցելու եւ առանձնապես խոշոր չափերի փողերի լվացման հանցանք: Ըստ քննչականի՝ նախաքննության ընթացքում պարզվել է, որ ստեղծվել է հանցավոր կազմակերպություն, որը կեղծ փաստաթղթերով 2008-2014 թթ. հափշտակել է Երեւան համայնքին պատկանող շուրջ 74 հեկտար մակերեսով հողատարածքներ: Կոմիտեն հաղորդում է, որ այդ «կազմակերպության անդամները» անշարժ գույքերն իրենց հետ փոխկապակցված ընկերությունների միջոցով տարբեր ժամանակահատվածներում գրավադրել են բանկերում՝ ստանալով 10 մլն եւ ավելի ԱՄՆ դոլարի վարկեր: Թե Վահան Քերոբյանը կոնկրետ ինչպես է «հանցավոր կազմակերպությանը» մասնակից դարձել եւ ներգրավվել փողերի լվացման գործում, քննչականը չի հստակեցնում: Այդ տարիներին Քերոբյանը «Սթար Դիվայդ» ՓԲԸ գործադիր տնօրենն է եղել: Ըստ քննչականի, «հանցավոր կազմակերպությունը» ստեղծել են գինու-կոնյակի գործարանի սեփականատեր Հովհաննես Մարգարյանը, Կադաստրի կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման նախկին ղեկավարը, ինչպես նաեւ մի քանի ընկերության սեփականատեր Գ. Ա.-ն՝ գործարար Գեւորգ Աֆանդյանը, նախկին «Սթար» սուպերմարկետների ցանցի եւ «Արզնի» հանքային ջրերի գործարանի ու այլ ընկերությունների սեփականատերը:

Հաղորդվել էր, որ 9 անձ ձերբակալվել է, որոնցից մեկի նկատմամբ կիրառվել է տնային կալանք, մյուս 8-ի նկատմամբ՝ այլընտրանքային խափանման միջոցներ (օրինակ, բացակայելու արգելք, գրավ):

Վահան Քերոբյանը ֆեյսբուքյան իր էջում ավելի ուշ հայտնեց, որ իրեն չեն կալանավորել, ավելին՝ իր նկատմամբ խափանման միջոց ընտրված չէ. «Ինձ հետ ամեն ինչ լավ է, Հակակոռուպցիոն դատարանը մերժեց ոչ միայն ինձ, այլեւ հինգ տարի քննվող եւ ավելի քան տասը տարվա վաղեմության դեպքերին վերաբերող գործով անցնող կարծես թե մյուս բոլոր՝ մեկ տասնյակից ավելի մեղադրյալներին կալանավորելու միջնորդությունները: Բնականաբար, մեղադրանքը չեմ ընդունում»:

Գործով անցնողներից մեկը, որը չցանկացավ ներկայանալ, մեզ պատմեց եղելությունը. «Մի քանի մարդիկ այդ ժամանակահատվածում նշված հողերը սեփականացրել են, գրանցել իրենց ազգականների անուններով, հետո փոխել այլ հարազատների անուններով, տարբեր կազմակերպությունների անունով գրավադրել են դրանք, մի քանի անգամ «Սթարի» վարկային պայմանագրով այդ գույքերը գրավ են դրվել: Ասում են, որ 99 թվականից մինչեւ 2014 թվականը ով կա-չկա, բոլորը միասին հանցավոր խումբ են, բայց ոչ մեկը ոչ մեկին չի ճանաչում, բոլորը նպատակ են ունեցել այդ գույքերն օրինականացել: Հետաքրքիրն այն է, որ գրավադրման վերցնող ընկերությունները որտեղի՞ց պիտի իմանային, որ դրանք ապօրինի գույքեր են, նախաքննական մարմինը ենթադրություններ է անել: Պարզ է, որ ոչ ոք չգիտեր, որ այդ գույքերն ապօրինի են, ասել են՝ քո մոտ այս գույքը գրավ դնենք, որպեսզի օրինականացնենք: Գործում 90 տարեկան մարդ կա, դպրոցի տնօրեն կա, ոչ մեկը ոչ մեկին չի ճանաչում, իսկ ՔԿ-ի կարծիքով՝ բոլորը հանցավոր խմբի անդամներ են»:

Ի դեպ, ըստ նախաքննական մարմնի, Վահան Քերոբյանը, երբ եղել է «Սթարի» տնօրենը, վարկային մի պայմանագիր է կնքել այդ հողատարածքներից մեկի վերաբերյալ: Նշենք, որ այս քրեական գործով վաղեմության ժամկետներն անցած են: Նախկին նախարարը մեր հարցերին հրաժարվեց պատասխանել՝ նշելով, թե իր պաշտպանական թիմի հետ պայմանավորվել է՝ մինչեւ դատարանի որոշման հրապարակվելը որեւէ մեկնաբանություն չտալ: Հիշեցնենք, որ Վահան Քերոբյանը վարչապետ Փաշինյանի առաջարկությամբ էկոնոմիկայի նախարար նշանակվեց 2020-ին, իսկ 4 տարի անց՝ 2024-ին, ազատվեց պաշտոնից եւ անմիջապես կալանավորվեց: Նախկին նախարարն այն ժամանակ մեղադրվում էր պաշտոնեական դիրքի չարաշահման հոդվածով. 2023-ին նախարարությունը մրցույթին մասնակցող ընկերությունների միջեւ ընտրություն էր կատարել ավելի բարձր գին առաջարկած «Սիներջի»-ի օգտին, ինչն էլ քննչականը համարել էր պաշտոնի չարաշահում: Սակայն Քերոբյանը չի ընդունում մեղադրանքն ու շարունակում է պայքարել արդարացման համար: Գործն արդեն դատարանում է:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՐՑՈՒՄ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՑ ԱՄԵՆԱՇԱՏԸ ԳՈՀ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ՝ 82.5%

ԷՋԸ՝
ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

«Այսքան հալածանքների ֆոնին անգամ Եկեղեցու վարկանիշը չի ընկել»,- նոյեմբերի 11-ին լրագրողների հետ զրույցում սոցիոլոգիական հարցումների արդյունքները ներկայացնելիս ասել է «Արար» քաղաքակրթական հետազոտությունների հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Խաչիկյանը: Նա նշել է, որ հոկտեմբերի 5-25-ն անցկացված հարցմանը մասնակցել է 1123 մարդ: «Այս հետազոտությունում մենք բաշխել ենք ըստ տարբեր սերունդների: Գիտեք՝ մինչեւ 11-28 տարեկանների սերունդը կոչվում է Z, պատկերացրեք, որ Z սերնդից ընդամենը 3.6 %-ն է դժգոհ Եկեղեցուց, իսկ մնացածը գոհ են: Փաստացի, Եկեղեցուց գոհունակությունը բավականին բարձր է, ինչպես սովորաբար լինում է՝ մինչեւ 70 %»,- ասել է նա: Հարցին, թե ինչպես են վերաբերվում Ադրբեջանի պահանջով Սահմանադրությունը խաղաղության դիմաց փոխելուն, հարցվածների 91.3 %-ը պատասխանել է՝ բացասական: Հարցվածների 48.5%-ի կարծիքով՝ Ադրբեջանի երկարաժամկետ նպատակը Հայաստանի ամբողջական ոչնչացումն է, 17.4%-ի կարծիքով՝ խաղաղ հարաբերությունների հաստատումը եւ տնտեսական համագործակցությունը, 15.0%-ի կարծիքով՝ Հայաստանի անկախության թուլացումը եւ կախվածության մեջ գցելը, իսկ 13.7%-ի կարծիքով՝ Հայաստանի տարածքի մի մասի բռնազավթումը:

Խաչիկյանը նշել է նաեւ, որ կոնկրետ հարց են տվել՝ կմիանա՞ն Եկեղեցու կողմից համախմբման կոչին, եւ շուրջ 45 տոկոսն «այո» է պատասխանել: «Z սերնդի շուրջ 68 տոկոսն է ասել, որ կմիանա, եթե Եկեղեցին համազգային համախմբման կոչ անի: Սա եւս կարեւոր արձանագրում է՝ Եկեղեցու հասցեին հնչող քննադատությունների ֆոնին»,- նշել է նա: Միեւնույն ժամանակ Խաչիկյանը նշել է, որ անկում չկա նաեւ կառավարության վարկանիշում: Ըստ նրա՝ կառավարության գործունեությունից գոհ է մոտ 40 տոկոսը:

Այս հարցումների մասին «Հրապարակը» մի քանի հարց ուղղեց **Արմեն Խաչիկյանին**:

- Ստացվում է, որ Հայ առաքելական եկեղեցու վարկանիշն ամենաբարձրն է՝ այսքան հալածանքներից հետո: Ըստ Ձեզ՝ ո՞րն է պատճառը:

- Ըստ հետազոտության՝ Հայ առաքելական եկեղեցին վայելում է 62.5% բարձր գոհունակություն: Իմ կարծիքով՝ դրա հիմնական պատճառն այն է, որ Եկեղեցուց դժգոհողների սեգմենտը վաղուց արդեն ձեւավորված է, եւ նոր հակաքարոզչությունը չի ընդլայնում դժգոհության շրջանակը: Ավելին, Հայոց եկեղեցին ավանդաբար եղել է հայության ինքնության առանցքը՝ որպես հոգեւոր եւ մշակութային հաստատություն, եւ այդ դիրքը պահպանվել է, անկախ արտաքին ճնշումներից կամ հալածանքներից:

- Նշում եք, որ հատկապես երիտասարդներն են Եկեղեցուն աջակցում: Ըստ Ձեզ՝ դա ինչո՞վ է պայմանավորված:

- Ինչպես նախորդ հետազոտության դեպքում, այս անգամ եւս Հայ առաքելական եկեղեցուց ամենաշատը գոհ են երիտասարդները (Z սերունդը)՝ 82.5%: Ի տարբերություն խորհրդային աթեիստական ոգով դաստիարակված տարեց սերնդի, երիտասարդները դաստիարակվել են հոգեւոր արժեքների համատեքստում՝ դպրոցում անցնելով Հայ առաքելական եկեղեցու պատմության դասընթացը:

- Հարցվածներն ամենաշատը վստահում են, փաստորեն, Եկեղեցուն եւ զինված ուժերին: Չե՞ն նշում, թե վստահությունն ինչով է պայմանավորված: Օրինակ, ՀՈՒ-ի հատկապես ո՞ր որակի կամ քայլերի համար են վստահում:

- ՀՀ զինված ուժերի նկատմամբ բարձր վստահությունը ոչ թե ՀՀ ՊՆ աշխատանքի գոհունակությունն է, այլ «հայոց բանակի» դրական ընկալումն է, քանզի հանրության մեծամասնությունն ունի մտերիմ զինծառայողներ, սպաներ, ինչը բանակի նկատմամբ ստեղծում է անմիջական եւ դրական վերաբերմունք: Հայոց բանակը պատմականորեն եղել է հայկական ինքնության եւ անվտանգության երաշխավոր, եւ մարդիկ վստահություն են հայտնում նրան որպես երկրի պաշտպանի, ոչ միայն որպես պետական կառույցի: Հայոց բանակը հայոց պատմության ամբողջ ընթացքում հայկականության հարատեւման երաշխավորն է եղել, հայկական ինքնության կրողն ու պաշտպանը:

- Արտաքին հարաբերությունների մասով, ըստ ձեր հարցումների, Ռուսաստանին, փաստորեն, հանրությունն ավելի է վստահում, քան ԵՄ-ին, ԱՄՆ-ին, բայց մարդկանց հետ շփումներում տպավորությունն այնպիսին է, որ ՌԴ-ից խիստ հիասթափված են, հատկապես՝ Արցախում տեղի ունեցած իրադարձություններից հետո: Ձեր կարծիքով, ինչո՞վ է պայմանավորված, որ մարդիկ կրկին սկսել են ՌԴ-ին ավելի շատ վստահել:

- Այս հետազոտությանը եւս հարց է հնչել Հայաստանի ռազմադաշնակցային հարաբերությունների վերաբերյալ: Հարցվածների 37.8%-ն ասել է, որ Հայաստանը պետք է Ռուսաստանի հետ ռազմադաշնակցային հարաբերություններ ձեւավորի, 18.3%-ի կարծիքով՝ ԱՄՆ-ի հետ, 17.5%-ի կարծիքով՝ Իրանի հետ, 15.9%-ի կարծիքով՝ Եվրամիության երկրների, իսկ 5.4%-ի կարծիքով՝ Հնդկաստանի հետ: Այս հարցում Ռուսաստանի հետ ռազմադաշնակցային հարաբերությունները կարեւորում են հատկապես գյուղաբնակները՝ 42.8%, ինչպես նաեւ՝ ցածր սոցիալական ապահովվածություն ունեցողների 54.2%-ը: ՌԴ-ի հետ ռազմադաշնակցային հարաբերությունների աջակցության աճը պայմանավորված է հետեւյալում. 2023թ. Արցախի բռնազավթման ու արցախցիների բռնագաղթի հետեւանքով զգալի անկում էր ապրել ՌԴ-ի նկատմամբ վստահությունը, որը հետզհետե մեղմանում է՝ մի շարք գործոններով պայմանավորված, այդ թվում՝ թե՛ ռուս-ուկրաինական պատերազմում եւ թե՛ աշխարհաքաղաքական ասպարեզում անզիջում գործելակերպով:

ԵԹԵ ԱՇԽԱՐՀԻՆ ՆԱՅՈՒՄ ԵՆՔ ՈՐՊԵՍ ՈՉԼՈՏ ԵՐԿԻՐ, ՄԵԶ ՀԱՄԱՐ ԵՐԲԵՔ ԼԱՎ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ

Հայաստանի արեւմտամետներն այս օրերին հրճվանքով հայտարարում են. «Հայաստանում ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) եւ Մեծ Բրիտանիայի Գաղտնի հետախուզական ծառայության (MI6) աջակցությամբ ստեղծվել է արտաքին հակահետախուզության նոր ծառայություն»: Ի՞նչ նախադեպ է սա եւ ի՞նչ վտանգներով է հղի, կարո՞ղ է, օրինակ, նույն հաջողությամբ ռուսական ՊԱԿ-ը՝ ԿԳԲ-ն եւս Հայաստանում հակահետախուզական ծառայություն ստեղծել, թե նման իրավունք միայն արեւմտյան երկրներին է տրված:

Հասարակական-քաղաքական գործիչ **Միքայել Նահապետյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, նկատում է. «Ազգն արժանի՞ է արդյոք պետություն ունենալու, թե՞ ոչ, խոսքը ցանկացած ազգի մասին է, չափվում է նրանով, թե արդյո՞ք տվյալ հանրությունն ունակ է ստեղծելու սեփական հետախուզության եւ հակահետախուզության մարմինների առնվազն կորիզը: Ինչու եմ այսպես կարծում՝ երբ նայում եմ շատ երկար պետականություն ունեցած երկրների պատմությանը եւ հակառակը՝ պետականություն չունեցած երկրների պատմությանը, օրինակ՝ Իսրայելին, տեսնում եմ, որ թեպետ բոլորն էլ ունեցել են որոշակի միջազգային աջակցություն, բայց բուն կորիզը շահերի՝ խնդիրները լուծելու համար, կարողացել են հենց իրենք ստեղծել: Այն որոշակի հասունության, բարդ խնդիրներին քաջաբար եւ պատասխանատու մոտենալու նշան է:

Ցավոք, ես չեմ տեսնում, որ մեր քաղաքական էլիտան, իսկ հատուկ ծառայությունները միշտ եւ բոլոր դեպքերում ստեղծում է քաղաքական էլիտան, ունենա այդ հասունությունը: Այն որոշակի գնահատական է մեզ՝ որպես հանրույթ արժանիքներին: Անխոս, այնպես չէ, որ եթե չենք կարողացել նման համակարգեր ստեղծել, ուրեմն արժանի չենք պետականություն ունենալու՝ ոչ, բայց թերարժեքության բարդույթը մեզ միշտ մտածելու, անհանգստանալու առիթ է տալու: Կասկածը միշտ լինելու է՝ մե՞զ են ծառայում, թե՞ ուրիշին: Առհասարակ, ես չունեմ նախընտրություններ, բնականաբար, Արեւմուտքն ավելի առաջադեմ ու զարգացած հատուկ ծառայություններ ունի: Եթե նրանք ողորմածություն դրսեւորեն եւ իրենց պոտենցիալին համարժեք մեզ օգնություն ցուցաբերեն, մեզ տալով մեր մի քանի տոկոսը, այլ ոչ թե իրենց նման դարձնեն, ապա այն գուցե լինի ավելի լավը, քան մենք ունեցել ենք մինչ այս պահը, սակայն արմատական հարցը չի լուծվում: Իսկ եթե վաղը պետք եղավ մեր հատուկ ծառայությունները գործի դնելու տվյալ պետությունների հետ սրված հարաբերություններում, ի՞նչ կլինի այդ ժամանակ, արդյո՞ք չենք կանգնելու այն նույն խնդրի առաջ, երբ կանգնել ենք մեր նախկին աջակից պետության հետ:

Որտեղի՞ց է այդ վստահությունը: Կամ մեկը, որ մեզ կարող է հոդաբաշխ տեքստով, հանգամանալից բացատրել, թե որ ռի՞չագի հաշվին ենք այդ հարցերը շրջանցելու: Եթե պետք է ասեն, որ մեր նոր աջակից-պարտնյորները մեզ սիրում են, ապա դա անլուրջ խոսակցություն է, այդ մարդիկ կարող են գնալ եւ կուրտիզանուհի աշխատել, պարտադիր չէ, որ անպայման լինեն քաղաքականության մեջ: Եթե մենք աշխարհին նայում ենք այնպես, որ մենք ոչլոտ երկիր ենք, եւ մեզ համար երբեք լավ չի լինելու, ինչ էլ մեր դիմաց շպրտեն, մեզ հերիք է, լավ է, ապա այդ տեսանկյունից կա ուրախանալու առիթ, որովհետեւ այն, ինչ կարող է մեր առաջ շպրտել, այն որակապես՝ կարգերով մի քանի անգամ բարձր է նրանից, թե ինչ կարող է մեր առաջ շպրտել Ռուսաստանը: Դրա պատճառն այն է, որ Ամերիկան հատուկ ծառայությունների բնագավառում շատ ավելի մեծ հաջողությունների է հասել, քան ՌԴ-ն: Ստացվում է, որ մենք զիբիլ քչփորող ենք, աղքատի զիբիլ քչփորողից դարձնում են հարուստի զիբիլ քչփորող, եւ մենք հաշտ ենք դրա հետ, քանի որ հաշտ ենք այն մտքի հետ, որ մեր դերն այս աշխարհում լեշակերությունն է, սրա-նրա կրճոնների վրա մակաբուծություն անելը: Բնականաբար, այս տեսանկյունից կա ուրախանալու բան, եւ ուրախացողները իզուր չէ, որ ուրախանում են: Այդ մարդիկ մեր ազգի դերը տեսնում են այդ տեսանկյունից եւ, բնականաբար, երջանկանում են, որ հարուստի զիբիլ են ճարել»:

Միքայել Նահապետյանն անդրադարձավ նաեւ նախկին պրակտիկային. «Մեր ամբողջ հատուկ ծառայությունների համակարգը ՌԴ-ից է գալիս, սարքել է Սովետական Միության համակարգը: Այն բոլոր լարերով կպած է ռուսական հատուկ ծառայությունների համակարգին: Հիմա փոխվում է զիբիլի ամանը, եւ մարդիկ նոր զիբիլի ման քչփորելուց ուրախացել են, բայց իրականում՝ մերը զիբիլ քչփորելը չէ, մերը ստեղծելն է, մենք պետք է ունենանք մերը, թող սկզբում լինի քիչ, բայց կարեւոր է, որ մեզ հարգեն, երբ գա այդ փուլը, մենք կարող ենք ստեղծել շատ ավելին: Եթե խնդիր դրվի, որ պետք է մերը ստեղծենք, ունենանք մեր արտադրանքը, առաջին օպերացիան եթե հաջողվի, մարդիկ, տեսնելով, որ կա նոր անդամ, որը խաղում է նոր մեթոդներով, ապա անպայման հայտնվելու են նոր սուբյեկտներ, ովքեր, օրինակ, ասելու են՝ ձեր սփյուռքի հետ մեր աշխատանքն այնքան էլ լավ չի ստացվում, կլինի՝ դուք աշխատեք նրանց հետ, իսկ մենք ձեզ օգնենք, օրինակ, լավ գաղտնալսման սարքերի հարցում, արբանյակային պատկերների եւ այլն: Այ, դա փոխօգնություն է»:

ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՄՆԱԼ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՅՔԱՅՎՈՂ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀՈՒՅՍԻՆ

1988-90-ականներին, երբ բոլորի աչքի առաջ Խորհրդային Միությունը քայքայվում էր, եւ միութենական հանրապետություններում ակտիվանում էին անկախական տրամադրությունները, որպես անկախությունը հնարավորինս շուտ հռչակելու հիմնավորում՝ մարդիկ ասում էին, որ Հայաստանը չպետք է մնա ԽՍՀՄ փլատակների տակ, որ հանկարծ այնպես չստացվի, որ մյուս բոլոր հանրապետություններն անկախանան, իսկ մենք չհասցնենք ու տուժենք վերջինը լինելու հանգամանքից: Հիմա Հայաստանի քաղաքացիներին փորձում են այլ վախ ներշնչել՝ իբր հիմա էլ Ռուսաստանն է փլուզվում, պետք է հնարավորինս շուտ տարանջատվել Ռուսաստանից, որ հանկարծ չմնանք ՌԴ փլատակների տակ: Եթե առաջին դեպքում ինչ-որ տրամաբանություն կար՝ Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր, իսկ ԽՍՀՄ-ն իսկապես փլուզվում էր, ապա այս դեպքում Հայաստանը ոչ միայն Ռուսաստանի կազմում չէ, այլեւ հակառակը՝ վաղուց ամերիկյան ենթակայության տակ գտնվող երկիր է, փլուզվողն էլ հիմա ոչ թե Ռուսաստանն է, այլ ամերիկյան գլոբալ կայսրությունը, եւ եթե մենք կարող ենք ինչ-որ փլատակների տակ մնալ, ապա միայն ամերիկյան փլուզվող կայսրության:

Ամերիկյան տարբեր ֆոնդերից սնվող եւ նախկինում իբրեւ թե իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող Արթուր Սաքունցն իր մյուս գործընկերների նման վերապրոֆիլավորվել է եւ դարձել հակառուսականության քարոզիչ եւ մեկն է նրանցից, ով արդեն տեւական ժամանակ կանխատեսում է Ռուսաստանի պարտությունը եւ կործանումը: Ահա թե ինչ է նա գրում. «Նման տնտեսական հետընթաց վիճակում գտնվող բռնատիրական պետության հետ մնալ նույն ԵԱՏՄ-ի կազմում, անթույլատրելի է: ՀՀ կառավարությունը պետք է անհապաղ դադարեցնի Հայաստանի անդամությունը ԵԱՏՄ-ին. ռուսական կայսրության գահավիժումն ու կործանումն անդառնալի պրոցես է, Հայաստանը չպետք է մնա այդ կայսրության ավերակների տակ»:

Ռուսաստանն աշխարհի ամենազարգացող կամ ամենատեխնոլոգիական երկիրը չես համարի, բայց այդ երկիրն աշխարհի չորրորդ տնտեսությունն է՝ իր հանքահումքային պաշարների շնորհիվ: Բայց նաեւ ունի զարգացող գյուղատնտեսություն եւ արդյունաբերություն. 2014-ին Ղրիմի միացումից հետո Ռուսաստանի տնտեսությունն արդեն 11 տարուց ավելի դիմանում է արեւմտյան ամենադաժան պատժամիջոցներին, եւ չնայած բոլոր կանխատեսումներին, թե շուտով Ռուսաստանը կփլուզվի, ռուսները կսկսեն սոված բունտեր անել, իսկ ռուսական ռուբլին այնքան կարժեզրկվի, որ այլեւս որեւէ բան դրանով հնարավոր չի լինի անել, քան ձմռանը վառարանում այրելն ու տաքանալը, երկրի տնտեսությունը շարունակում է կայունություն դրսեւորել եւ ինչ-որ ոլորտներում նույնիսկ զարգանալ: Ավելին, աշխարհի տարբեր երկրներ շարունակում են միանալ Ռուսաստանի, Չինաստանի եւ Հնդկաստանի մասնակցությամբ ստեղծված ԲՐԻԿՍ-ին, որն իրական այլընտրանք է դառնում ամերիկյան գլոբալ տիրապետությունից հոգնած եւ այդ տիրապետությունից ազատագրվել ցանկացող տասնյակ երկրների համար:

Լավ, ենթադրենք՝ Ռուսաստանը կործանվում է, Ռուսաստանից տարանջատվենք, իսկ ո՞ւմ հետ բարեկամություն անենք: Հայաստանը փոքր երկիր է, տնտեսապես ու անվտանգային առումով չափազանց խոցելի, ինքնաբավ տնտեսություն չի կարող կառուցել, ինքնուրույն իրեն պաշտպանել չի կարող, մանավանդ մի տարածաշրջանում, որտեղ առնվազն երկու հարեւան երկիր հպարտանում են Հայաստանին պարտության մատնելու իրենց կարողությամբ եւ չեն հրաժարվում Հայաստանը ոչնչացնելու ծրագրից: Գաղտնիք չէ, որ հակառուսական ուժերի համար սրբության սրբոցը, ամենափրկիչն ու մորից ավելի սիրասունը Միացյալ Նահանգներն է, աշխարհի ամենաազատը, ամենադեմոկրատականը, ամենահզորը, ամենազարգացողն ու ամենաանհաղթը: Միայն թե Միացյալ Նահանգները ոչ մեկին, այդ թվում՝ Հայաստանին, անվտանգության երաշխիք չի տալիս, նրա տված երաշխիքն անվավեր է, վկան՝ Ուկրաինան:

Միացյալ Նահանգներն իսկապես աշխարհի ամենահզոր երկիրն է, բայց փաստ է նաեւ, որ այս հզորությունն այլեւս նախկինը չէ, այդ երկիրը կորցնում է իր ուժն ու ազդեցությունը, եւ աշխարհի ավելի մեծ թվով երկրներ են ըմբոստանում Ամերիկայի դեմ՝ փորձելով ազատվել նրա ազդեցությունից եւ նրա թելադրանքով ապրելու պարտադրանքից: Եվ դա միայն մենք չենք ասում, դա ասում են փաստերը եւ ամերիկյան առաջատար գործիչները:

Ահա թե ինչ է ասում ամերիկյան հայտնի տնտեսագետ՝ պրոֆեսոր Ջեֆրի Սաքսը, խոսելով ԲՐԻԿՍ-ին միանալու Մեքսիկայի կառավարության ցանկության մասին. «Սառը պատերազմից հետո մենք 30 տարի անցկացրինք՝ վստահ լինելով, որ կարող ենք պայմաններ թելադրել ամբողջ աշխարհին, որ մեր տնտեսական մոդելը միակն է, որը կարող է առաջընթաց ապահովել, որ մեր ռազմական գերազանցությունը մեզ հավերժական առավելություն է ապահովում: Բայց պարտադրանքն առաջացնում է վիրավորվածություն, ինչն էլ առաջացնում է այլընտրանքի որոնում: Պարտադրանքն աշխատում է այնքան ժամանակ, քանի դեռ դու բավարար ուժեղ ես, որ թելադրես քո պայմանները, քանի դեռ չկա այլընտրանք, մինչդեռ հիմա Չինաստանն առաջարկում է այլընտրանք՝ մեկ ուղի մեկ ճանապարհի, ԲՐԻԿՍ-ի տեսքով: Միաբեւեռ աշխարհն ավարտվել է, ամերիկյան գերիշխանությունը թուլանում է ոչ թե այն պատճառով, որ մենք թուլանում ենք, այլ՝ որովհետեւ մնացած աշխարհն է ուժեղանում: Ռուսաստանի հետ կապված՝ մենք պետք է ընդունենք, որ այն չի փլուզվի եւ արմատապես չի փոխի գործող համակարգը, որովհետեւ մենք այդպես ենք ուզում: Սա չի նշանակում համակերպվել նրանց բոլոր արածների հետ, այլ գտնել համագործակցության եւ համակեցության եզրեր»:

Սաքսն ասում է, որ ամերիկացիները չպետք է ընտրություն անեն ամերիկյան առաջնորդության եւ քաոսի միջեւ, այլ բազմաբեւեռ աշխարհի գոյությանը հարմարվելու ընդունակության եւ ամերիկյան առաջնորդության ֆանտազիայից կախվածության միջեւ, որն ավելի մեծ թվով երկրների է վանում դեպի այնպիսի այլընտրանքային տարբերակներ, ինչպիսին ԲՐԻԿՍ-ն է:

Թե ինչպիսին է ամերիկյան թուլացող հզորությունը, ցույց է տալիս նաեւ Euronews հեռուստաալիքի հաղորդումը, որում պատմում են, որ ամերիկյան կառավարության աշխատանքի դադարեցման արդյունքում Գերմանիայում տեղաբաշխված ամերիկյան 37 հազար զինվորականներ մնացել են առանց աշխատավարձի եւ սննդի, եւ ամերիկյան բանակի հրամանատարությունը նրանց խորհուրդ է տվել սնունդ հայթայթելու համար դիմել գերմանական բարեգործական կազմակերպություններին՝ սննդի բանկերին եւ սննդի բաշխման կետերին, անվճար սնունդ բաժանող կազմակերպություններին: Ամերիկյան կայսրության թուլացման մասին է խոսում նաեւ ամերիկյան տիեզերական գործակալության՝ NASA-ի բյուջեն 24%-ով կրճատելու մասին հաղորդագրությունը. գիտական ծրագրերի ֆինանսավորումը կրճատվում է գրեթե կիսով չափ՝ 47%-ով, ինչն առաջացրել է գիտնականների անհանգստությունն ու դժգոհությունը:

Ինչո՞ւ ենք այդքան մանրամասն գրում դրա մասին. Հայաստանի իշխանությունն իր հույսը դրել է ԱՄՆ-ի վրա, Փաշինյանը հույս ունի, որ օգոստոսի 8-ին ԱՄՆ նախագահի միջնորդությամբ ստորագրված փաստաթուղթը կապահովի խաղաղություն, կայունություն եւ նույնիսկ բարեկեցություն, քանի որ Հայաստանը հայտնվում է ԱՄՆ հովանու տակ: Բայց պատմությունը ցույց է տալիս, որ թուլացող եւ քայքայվող կայսրություններն առաջինը հրաժարվում են իրենց ծայրամասերի հսկողությունից՝ դրանք զոհելով ավելի կարեւոր եւ կենսական շահերի: ԱՄՆ-ն բացառություն չէ, եւ նրա ներկայիս վարքագիծն էլ է ցույց տալիս, որ ֆինանսապես եւ ռազմական առումով թուլացող կայսրությունն այլեւս չի կարողանում պաշտպանել իր հովանու տակ գտնվող երկրներին եւ, չունենալով առաջվա ազդեցությունն ու հեղինակությունը, հպարտանում է չեղած խաղաղություններով եւ կեղծ խաղաղարարությամբ:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉ ԿԱՌԱՋԱՐԿԵԻ «ԱՌԱՋԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻՆ

Արդեն մի քանի շաբաթ է՝ շրջանառվում է ԲՀԿ առաջնորդ, ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի եւ նրա թիմակիցների հեղինակած «Առաջարկ Հայաստանին» ծրագիրը: Ու քանի որ հայտարարել են, որ ցանկացած քաղաքացի կարող է իր առաջարկները ներկայացնել նախագծին, որոնք, եթե խելքին մոտ են, կարող են եւ դառնալ ընդհանուր ծրագրի մաս, ապա փորձեմ սեփական առաջարկներս ներկայացնել:

Ինչ կառաջարկեի ես Գագիկ Ծառուկյանի «Առաջարկ Հայաստանին» նախագծին: Իմ կարծիքով, ներկայիս իրականությունը նկատի ունենալով՝ կարեւոր է, որ ապագայում հստակեցվեն ՀՀ պետական իշխանության եւ Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունները: Ավելի պարզ ասած՝ դետալացված սահմանվեն այդ փոխհարաբերություններն օրենսդրորեն: Քրիստոնյա աշխարհում, որքան կարողացել եմ ուսումնասիրել հարցը, պետական իշխանության եւ այդ պետության տարածքում գործող դոմինանտ կրոնական կազմակերպության միջեւ փոխհարաբերությունների կարգավորվածության առումով օրինակելին Իտալիայի եւ Հռոմի կաթոլիկ եկեղեցու կենտրոն Վատիկանի փոխհարաբերություններն են: Այստեղ կարգավորումները սահմանված են, այսպես կոչված, Լաթերանյան համաձայնագրերով, որոնք Իտալիայի իշխանությունների եւ Սուրբ Աթոռի միջեւ կնքվել են 1929 թվականին: Լաթերանյան համաձայնագրերը բաղկացած են 3 փաստաթղթից՝ Պայմանագրից, Կոնկորդատից եւ Ֆինանսական համաձայնագրից: Փաստաթղթերը, եթե ընդհանուր գծերով ներկայացնենք, սահմանում են Վատիկանի կարգավիճակը, Հռոմի պապի կարգավիճակը՝ Վատիկանում, Իտալիայի եւ Վատիկանի փոխհարգալից հարաբերությունները, Իտալիայում կաթոլիկ եկեղեցու կարգավիճակը, կաթոլիկ դավանանքի՝ Իտալիայում որպես պետական (1984 թվականից՝ առանձնահատուկ) կրոնական դավանանքի կարգավիճակը, Վատիկանի ֆինանսական գործունեությունը, ֆինանսատնտեսական հարաբերությունների առումով Իտալիա-Վատիկան հարաբերությունները:

Ըստ իս, ապագայում ճիշտ կլինի, որ Լաթերանյան համաձայնագրերը դառնան պրոտոտիպ՝ Հայաստանի իրականությանը տեղայնացվելով, Հայաստանի իշխանությունների եւ Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունների իրավական կարգավորումների հստակեցման ու դետալիզացված կարգավորումների սահմանման համար: Ընդ որում, հատկապես 2018-ից մինչ օրս Հայաստանի իշխանությունների եւ Հայ առաքելական եկեղեցու՝ ի դեմս Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեւ քննարկված եւ պաշտոնական հաղորդագրություններով հանրայնացված հարցերը նկատի ունենալով, կարծում եմ, որ այդ կարգավորումները պետք է ներառեն նաեւ դրույթներ հոգեւորականության՝ հանրային հայտարարությունների ազատության սահմանների վերաբերյալ: Ընդ որում՝ սահմանումները պետք է լինեն այնքան «ոսկերչական ճշգրտության», որ տարակարծությունների, երկիմաստությունների եւ տարընթերցումների տեղիք չտան:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Երեւանի օդի աղտոտվածության թվային ցուցանիշների ներքո մարդկային խեղված ճակատագրեր են՝ ծանր հիվանդությունների, իմացական կարողությունների կորստի, դեմենցիայի պատմություններ: Մայրաքաղաքի փողոցներն այսօր պարունակում են անտեսանելի սպառնալիք հանդիսացող PM 2.5 միկրոմասնիկներ: Սա ենթադրություն չէ, այլ գիտականորեն ապացուցված փաստ, եւ այդ մասին անդադար զգուշացնում են հետազոտողները: PM 2.5 մասնիկները ներթափանցում են թոքեր, անցնում արյան մեջ եւ շարժվում օրգանիզմով մեկ: Դրանք առաջացնում են տարբեր քրոնիկական բորբոքումներ ու արյունատար անոթների նեղացում, խաթարվում է արյան շրջանառությունը ոչ միայն սրտում ու թոքերում, այլեւ՝ գլխուղեղում: Արդյունքում, գլխուղեղի բջիջները թթվածնի, արյան, վիտամինների եւ անբավարար սնուցում են ստանում ու սկսում դեգրադացիայի ենթարկվել: Նորագույն հետազոտությունները բացահայտել են գլխուղեղի բջիջների դեգրադացիայի եւ դեմենցիայի միջեւ կապը:

Բնապահպանական վտանգն առկա է հանրապետության բոլոր քաղաքներում, սակայն Երեւանում այն առավել մեծ քանակի մարդկանց է խոցում, եւ բացասական հետեւանքներն առավել մեծ են գերծանրաբեռնված երթեւեկության, հնամաշ ավտոմեքենաների ու տեխնոլոգիական արտադրությունների վտանգավոր արտանետումների եւ մի շարք այլ գործոնների զուգորդման պատճառով: Երեւանի օդի, ջրի, հողի աղտոտվածությունը ոչ թե պատահար է, այլ՝ ապրելակերպ, որովհետեւ լիովին չի արդիականացվել հասարակական տրանսպորտը, քաղաքը գրավել են արհամարհելը, շարունակվող ծառահատումներն էլ ավելի են վատթարացնում իրավիճակը: Կարեւորը միայն աղտոտվածությունը բնորոշող թվերը չեն: Կարեւորը մարդիկ են, հատկապես խոցելի խմբերը՝ երեխաներ, տարեցներ, հիվանդներ, որոնք ամեն օր շնչում են այդ օդը եւ վճարում իրենց առողջությամբ ու մտավոր ունակությունների անկմամբ:

Քաղաքային իշխանությունները հաճախ խոսում են «կարգավորման բարելավման» մասին, սակայն խոսքերի եւ գործողությունների միջեւ կա մեծ ճեղքվածք: Արտանետման չափումներն արվում են ոչ ամբողջական, եւ ոչ բոլոր տվյալներն են հրապարակվում: Մինչդեռ բժիշկներից լսում ենք տագնապալի տեղեկություններ այն մասին, որ ավելանում են ալերգիաները, շնչուղիների բորբոքումները, վաղաժամ հոգնածության հետ կապված գանգատները: Իսկ այս դեպքերը միջնաժամկետ կտրվածքում արագորեն հարուցում են ճանաչողական խնդիրներ:

Հոգեբանորեն մենք բնապահպանական վտանգները մակերեսորեն ենք ընկալում, որպես, գուցե եւ հնարավոր, բայց ժամանակի մեջ մեզնից հեռու մի բան: Սակայն երեխաներն արդեն ավելի շատ են հիվանդանում, իսկ տարեցների մոտ ահագնանում են կոգնիտիվ ունակությունների նվազման դեպքերը: Այսինքն՝ սա հիպոթետիկ, ապագա սպառնալիք չէ, այլ մեր աչքի առաջ ընթացող սխալների հետեւանք: Սա ոչ թե վաղվա վտանգ է, այլ այսօրվա իրականություն: Օդի աղտոտվածության հետեւանքները մեր մեջ են, մեր ընտանիքներում, մեր կյանքում:

Ըստ ամենայնի, քաղաքապետարանում տեղյակ են Երեւանի բնապահպանական խնդիրներից: Դրանք պահանջում են գտնել համալիր լուծման ուղիներ՝ ներառելով առողջապահությունը, տրանսպորտի պլանավորումը, կանաչ ենթակառուցվածքները, աղտոտող հինը արդի տեխնոլոգիաներով փոխարինելը: Հարկ է ներդնել «արդարացի վճարումների մոդել»: Դա տեղական վճարների եւ տուրքերի այնպիսի համակարգ է, որտեղ գործում է «Շատ աղտոտողը շատ է վճարում, քիչ աղտոտողը՝ քիչ» սկզբունքը (Polluter pays - աղտոտողը վճարում է): Այս մոդելը մերժում է համահարթեցնող մոտեցումը: Կառավարությունը, քաղաքապետարանները պետք է անկախ մշտադիտարկման հնարավորություն տան գիտնականների, բժիշկների, լրագրողների խմբերին: Բնակչության ֆիզիկական եւ մտավոր առողջության առումով Երեւանն այն աստիճանի է վտանգված, որ պետք է գործել այսօր, պետք էր սկսել երեկ ու արագ եւ պետք է գործել թափանցիկ ու պատասխանատու:

Մայրաքաղաքի մթնոլորտային օդը մեր քաղաքացիական հասունության փորձաքարն է: Եթե թույլ ենք տալիս, որ երեխաները շարունակեն շնչել թույն, ապա ստորագրում ենք մեր կործանման դատավճիռը: Քաղաքացին պետք է պահանջի առողջ ապրելու իր իրավունքը նույն հաստատակամությամբ, ինչպես պահանջում է առողջ սնունդ, անվտանգ կյանք, լավագույն կրթություն: Որովհետեւ օդը, որը շնչում ենք, որոշում է մեր հիշողությունների որակը, մեր հոգեւոր եւ մտավոր կարողությունների սահմանը:

ԵԹԵ ԹՈՒՅԼ ԵՆՔ ՏԱԼԻՍ, ՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՇՆՉԵՆ ԹՈՒՅՆ՝ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԴԱՏԱՎՃԻՌԸ

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ՔՊ-ԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ԾԻԾԱՂԵԼԻ ԳՆԵՐՈՎ ՕՏԱՐՈՒՄ Է ՀՈՂԵՐԸ

2021թ. փետրվարի 26-ին, վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, Դիլիջանի պետական քոլեջի շրջանավարտ, անձնական գործում «սեռ»-ի դիմաց «արու» գրած Դիլիջան համայնքի ավագանու անդամ Դավիթ Սարգսյանը նշանակվեց Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար: 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած համայնքի ավագանու ընտրությունների արդյունքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը մեծամասնություն ունեցավ, Դ. Սարգսյանն էլ ընտրվեց Դիլիջանի համայնքապետ: Նա այդ պաշտոնում 4 տարի շարունակ օտարել է Դիլիջան քաղաքի եւ համայնքի բնակելի եւ հասարակական կառուցապատման ենթակա հողերը: Օտարման աճուրդները մեծամասամբ կրել են ձեւական բնույթ, նախապես հայտնի է եղել աճուրդի հաղթողը: Շատ դեպքերում Դիլիջանում հողերի սեփականատեր են դարձել Երեւանի, Վանաձորի, Հայաստանի այլ բնակավայրերի բնակիչներ, մինչդեռ դիլիջանցիները դժգոհում են, որ երբ իրենք բնակելի կամ հասարակական կառուցապատման համար դիմել են համայնքի ղեկավարին, Դ. Սարգսյանը մերժել է՝ ասելով, թե Դիլիջանում ազատ հողեր չկան: Համայնքապետը հողերը պատահական մարդկանց չի օտարում:

Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի 5-րդ փողոց, թիվ 60 հասցեի 1096 քմ հասարակական կառուցապատման հողամասը պատկանում է Սուրեն Աղաջանյանին, որը դիմել է համայնքի ղեկավարին՝ նշված հողամասին կից, Թեղուտի 5-րդ փողոց, թիվ 58/3 հասցեի 232.8 քմ մակերեսով եւ 5-րդ փողոց, թիվ 58/4 հասցեի 324.5 քմ մակերեսով հողամասերն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Ավագանին 2024թ. դեկտեմբերի 17-ի որոշմամբ համաձայնություն է տվել այդ հողամասերն ընդլայնման կարգով Ս. Աղաջանյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Դ. Սարգսյանը 2024թ. դեկտեմբերի 24-ին որոշել է Թեղուտ գյուղի 5-րդ փողոց, թիվ 58/3 հասցեի 232.8 քմ եւ 5-րդ փողոց, 58/4 հասցեի 324.5 քմ հողամասերի գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական կառուցապատման, Թեղուտի 5-րդ փողոց, թիվ 60 հասցեի 1096 քմ հասարակական կառուցապատման հողամասին կից գտնվող, 5-րդ փողոց, թիվ 58/3 հասցեի 232.8 քմ մակերեսով եւ 5-րդ փողոց, թիվ 58/4 հասցեի 324.5 քմ մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձեւով (ընդլայնման կարգով) օտարել Ս. Աղաջանյանին: Հողամասերի արժեքը կազմել է համապատասխանաբար 284 հազար 249 դրամ եւ 39 հազար 6215 դրամ: Մինչդեռ Թեղուտի հողերի շուկայական գինը բավական բարձր է: Դիլիջանի բնակիչ, 1955 թ. ծնված Սուրեն Աղաջանյանի «ձեռքը չոր քարի տակ չէ», նա Դիլիջանի հյուսիսային հատվածում, միջպետական ճանապարհի եզրին գտնվող հայտնի ռեստորանի՝ «Գետափ» համալիրի սեփականատերն է, Դիլիջան ազգային պարկի նախկին տնօրենը:

Հիմա հիշենք, թե Նիկոլ Փաշինյանն ինչ էր ասում կառավարության 2025թ. մարտի 13-ի նիստում: Նա հայտարարեց, որ ՊԿԾ-ի, ԱԱԾ-ի եւ այլ մարմինների միջոցով պետք է վերահսկվեն եւ արգելվեն համայնքներում ձեւական աճուրդները, եւ հանձնարարեց. «Որտեղ ծիծաղելի գներով հողեր են դրված վաճառքի, ուղղակի կանգնեցրեք: Հիմա հրապարակային ասում եմ՝ եթե չկանգնեցնեն համայնքները, մենք կոնկրետ, չգիտեմ՝ ոնց կինչի, այդ համայնքների հետեւից ենք ընկնելու, գնալու ենք տեսնենք՝ ինչ է կատարվում: Այս հարցը շատ հրատապ է: ՏԿԵՆ-ի գլխավորությամբ աշխատանքային խումբ ստեղծեք, թող մաքսիմում 1 ամսվա ընթացքում տան առաջարկ»:

Դրանից հետո Դավիթ Սարգսյանը փոխեց տակտիկան, համայնքի հողերն սկսեց օտարել հողամասերի ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքով, կադաստրային գներով: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում համայնքապետի նման որոշումները բազում են: Ահավասիկ, դրանցից մեկը. Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց, 2-րդ նրբ. թիվ 50/1 հասցեի բնակելի տունը 500 քմ տնամերձ հողամասով պատկանում է Սիրամարգ Եգանյանին, որը դիմել է Դիլիջան համայնքի ղեկավարին՝ նշված հողամասին կից, Սայաթ-Նովայի փողոց, թիվ 52/5 հասցեի 499.4 քմ հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Ավագանին 2025թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ համաձայնություն է տվել 499.4 քմ հողամասն ընդլայնման կարգով Ս. Եգանյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հոկտեմբերի 23-ին Դ. Սարգսյանը որոշել է 500 քմ տնամերձ հողամասին կից գտնվող, Սայաթ-Նովայի փողոց, թիվ 52/5 հասցեի 499.4 քմ հողամասն ուղղակի վաճառքի ձեւով (ընդլայնման կարգով) օտարել Ս. Եգանյանին: Հողամասի արժեքը կազմել է 3 մլն 413 հազար 050 դրամ, որը կադաստրային արժեքն է: Դիլիջան համայնքի հողերն ուղղակի վաճառքով, ոչ աճուրդներով օտարելու դեպքում՝ համայնքի բյուջե չեն մտնում տասնյակ միլիոնավոր դրամներ: Եթե մտնեին, այդ գումարներով համայնքում կարող էին կարեւոր ծրագրեր իրականացվել, օրինակ, չցանկապատված, կովերի արոտավայր դարձած Դիլիջան համայնքի աղբավայրը գոնե կցանկապատվեր, կարգի կբերվեր:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԶՐԿԵԼ Է ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ, ՈՐՔԱՆ ԷԼ ԱՄՈԹԱԼԻ Է ԱՍԵԼԸ, ՆԱԵՎ՝ ՀԱՅԻՑ

ԲԱԺՈՒՆ

Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովը ITV-ին տված հարցազրույցում պատմել է Ալիեւ-Փաշինյան շփումների մասին. «Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ առաջին շփումը տեղի է ունեցել 2018 թվականի սեպտեմբերին՝ Դուշանբեում: Այդ ժամանակ նախագահը հայտարարել էր, որ խնդիրը պետք է լուծվի, եւ որ «ադրբեջանական հողերը պետք է ազատագրվեն»: Փաշինյանի դիրքորոշումն այդ ժամանակ բավականին կառուցողական էր, նա ասել է. «Ես նոր եմ իշխանության եկել եւ կձեռնարկեմ անհրաժեշտ քայլերը՝ հակամարտությունը կարգավորելու համար»: Դուշանբեում գտնվելու ընթացքում Իլհամ Ալիեւը հանձնարարել է պաշտպանական գերատեսչությանը՝ ապահովել խաղաղություն ու կայունություն՝ բոլոր ուղղություններով: Նիկոլ Փաշինյանի հետ համաձայնություն է ձեռք բերվել ուղիղ կապի գիծ կազմակերպելու վերաբերյալ. այդ գիծը ստեղծվել է, որպեսզի լարվածության դեպքում կողմերը կարողանան անմիջապես քայլեր ձեռնարկել կայունությունն ապահովելու համար: 2019 թվականին Վիեննայում տեղի է ունենում եւս մեկ հանդիպում՝ արդեն ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ: Այս հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանն ամբողջությամբ փոխում է իր դիրքորոշումը՝ բացահայտ հայտարարելով, որ չի կարող լուծել այդ հարցը եւ որ չի լուծի այն: Նա նաեւ ներկայացնում է շատ հետաքրքիր փաստարկ. «Եթե ես դա անեմ, ինձ կսպանեն»: Նա նույնիսկ հռետորական հարց է տալիս Ալիեւին. «Դուք ուզում եք, որ ինձ սպանե՞ն»: Նախագահը պատասխանում է. «Ընդհանուր առմամբ, չեմ ուզում որեւէ մեկի մահը, բայց դա ոչ մի կերպ չի կարող արդարացնել «ադրբեջանական հողերի շարունակվող օկուպացիան»»:

Նա խոսել է նաեւ ՌԴ ԱԳ նախարարի հետ իր զրույցի մասին. «Լավրովի առաջարկած փաստաթղթով՝ շփման գծի արեւելյան հատվածում պետք է տեղակայվեին ռուս խաղաղապահները՝ ադրբեջանական զինված ուժերի հետ միասին, իսկ արեւմտյան հատվածում՝ կրկին ռուս խաղաղապահներն ու հայկական զինված ուժերը»: Ըստ Բայրամովի՝ առաջարկն արվել է հոկտեմբերի 9-ին, իսկ հրադադարի պայմանավորվածությունը պետք է ուժի մեջ մտներ նոյեմբերի 9-ից:

Հիշեցնենք. 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի շփման գծի եւ Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայվեց Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմը՝ 1960 զինծառայողով, հրաձգային զենքով, 90 զրահամեքենաներով, 380 միավոր ավտոմոբիլային եւ հատուկ տեխնիկայով: 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում սկսեց Արցախի դեմ: Ադրբեջանական ագրեսիայի զոհերի թիվը գերազանցեց 220-ը, եւ 120 հազար արցախահայությունն արտագաղթեց Հայաստան՝ ֆիզիկական բնաջնջումից խուսափելու համար:

Ադրբեջանագետ Արմինե Ադիբեկյանը, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Բայրամովի հայտարարություններին, նկատում է. «Հրադադարի մասին ավելի վատ հայտարարել էր նաեւ Վլադիմիր Պուտինը եւ նշել, որ առաջարկ է արվել, սակայն առաջարկը Նիկոլ Փաշինյանի կողմից մերժվել է: Դրա մասին խոսել է նաեւ Նիկոլ Փաշինյանը: Ակնհայտ փաստերի մասին ենք խոսում, ուղղակի այսօր Բայրամովը խոսում է որոշակի մանրամասների մասին, օրինակ, թե ինչ է պարունակում հրադադարի փաստաթուղթը: Գիտեինք, որ հրադադար է առաջարկվել, բայց նրբություններին ծանոթ չէինք, թե ինչ խաղաղապահներ պետք է տեղակայվեին եւ այլն: Այն փաստացի Նիկոլ Փաշինյանի կողմից մերժվել է, իսկ դա գիտեինք բոլորս: Այդ մասով Բայրամովը չի ստում, ինչն ինձ համար խիստ զարմանալի է, որովհետեւ նա տարիներ շարունակ, ադրբեջանական բոլոր ինստիտուտների հետ մեկտեղ, խեղել է ճշմարտությունը, երբեւէ շիտակ խոսք չեն ասել: Այսօր մարդը խոսում է այն բաների մասին, որոնք մենք գիտեինք, պարզապես ինչ-ինչ դետալներ է ավելացրել, որոնք բավականին մոտ են ճշմարտությանը: Բայց այս հայտարարություններն արդեն ցավալիորեն չունեն որեւէ դեր, քանի որ զարգացումները ցույց տվեցին, որ հայանպաստ որեւէ գործողություն, քայլ Նիկոլ Փաշինյանը չի կատարել: Պարզվում է՝ դեռ 2020 թվականին եղել է Արցախը պահպանելու հնարավորություն, ընդունել Լավրովի փաստաթուղթը, սակայն դա չի արվել: Փաշինյանն արել է դրա ճիշտ հակառակը՝ հայթափելով Արցախը, զրկել է ՀՀ-ն անվտանգությունից եւ, որքան էլ ամոթալի է ասելը՝ նաեւ հացից: Արցախը Հայաստանի նաեւ հացահատիկի պահանջների զգալի մասը բավարարում էր, իսկ այսօր կասկածանքով Ադրբեջանի տարածքով ցորեն են բերում, եւ էկոնոմիկայի նախարարը հպարտությամբ նշում է, որ Հայաստանը Ղազախստանից կարողացել է ցորեն գնել: Կամաց-կամաց բացահայտվում են այն ողբերգությունները, որոնք մեզ հասցրել են այս օրվան»:

Ադիբեկյանը նաեւ անդրադարձավ Փաշինյանի հռետորական հարցին, որ կարող են իրեն սպանել. «Ես այս հայտարարությունից տպավորություն չստացա, որ Փաշինյանը հակված չի եղել գնալ այն քայլերին, որոնց գնացել է: Այդ հայտարարությունը նշանակում է մի բան. նա Ալիեւին ասել է՝ ինձ պաշտպանեք, ֆինանսավորեք, երաշխավորեք իմ անվտանգությունը, փող տվեք ինձ, որ ես կարողանամ թիկնապահներ վարձեմ այդքան շատ, ոստիկաններին մեծ, ահռելի աշխատավարձեր տամ եւ ես կանեմ այն, ինչ դուք ցանկանում եք: Ալիեւը, վստահ եմ, չի մերժել Փաշինյանին, տվել է փող, հակառակ դեպքում Հայաստանին որտեղի՞ց այդքան փող, որ այսքան ահռելի գումարներ տրամադրեն ոստիկաններին՝ Նիկոլի անձնական անվտանգությունն ապահովելու համար: Այս մարդն անգամ զուգարան անվտանգության աշխատակիցների հետ է գնում, ինչի՞ մասին է խոսքը: Փաշինյանը երբեք դեմ չի եղել Արցախը դավաճանելուն, դեմ է եղել սպանվելուն: Նրա այդ հայտարարությունից մի բան եմ հասկանում, որ եթե իր անվտանգության հարցերն ապահովվեն, ինքը հեշտությամբ կզիջի Արցախը: Եկեք հիշենք, թե որ պետություններն են առաջինը ոտքի ելնում, երբ Հայաստանում հականիկոլական ակցիաներ են տեղի ունենում՝ Ադրբեջանն ու Թուրքիան: Անգամ պատրաստ են Հայաստան զորք մտցնել, միայն թե Փաշինյանի անվտանգությունն ապահովեն»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ». ՆՈՐ ՍԵՐԻԱԼ՝ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռուսական NTV-ն նոյեմբերի 3-ից սկսել է նոր պատմական դրամատիկ մասշտաբային սերիալի ցուցադրությունը, որը կոչվում է «Կոստանդնուպոլիս»: Այն պատմում է 1920-ականներին Ռուսաստանից հեռացած էմիգրանտների՝ հայրենազրկված ու անհայրենիք մնացած ռուսների մասին: Նրանց շարքում է նաեւ սպիտակգվարդիական սպա Սերգեյ Ներատովը: Հերոսը կորցրել է հայրենիքը, ընտանիքը, հավատը: Կոտրված է ու բացարձակապես միայնակ: Սակայն հենց նրան է վիճակված գլխավորելու էմիգրացիան, որպեսզի օգնի հայրենակիցներին՝ պահպանելու այն, ինչին կարողացել են հասնել օտար ափերում:

Սերիալի գլխավոր դերերում հանդես են եկել Ալեքսանդր Ուստյուգովը, Օքսանա Ակինշինան, Կիրիլ Կյարոն, Վյաչեսլավ Չեպուրչենկոն ու Սերգեյ Մարինը: Քաղաքացիական պատերազմի պարտությունից հետո Ռուսաստանից փախչում են սպիտակգվարդիականներ եւ խաղաղ մարդիկ, որոնք չեն ընդունել նոր իշխանություններին: Վրանգելի ջախջախված բանակի սպա Սերգեյ Լվովիչ Ներատովը (նրա կերպարը մարմնավորում է Ալեքսանդր Ուստյուգովը) կարողանում է Ղրիմի վրայով հասնել Կոստանդնուպոլիս: Նա կորցրել է հայրենիքը, կնոջն ու զավակներին սպանել են: Օտարության մեջ տեսնում է, որ իր հայրենակիցներին ընկալում են որպես երկրորդ սորտի մարդիկ: Նրանցից շատերը հայտնվել են ստորացուցիչ աղքատության մեջ, նույնիսկ հանցագործություններ են անում՝ մոռանալով պատվի, կարեկցանքի եւ պարտքի զգացման մասին: Հերոսն աստիճանաբար դառնում է ռուսական էմիգրացիայի չհայտարարված առաջնորդը: Որպեսզի կարողանա պաշտպանել արժանապատիվ կյանքի նրանց իրավունքը, նա ստիպված է դիմագրավել բանդիտներին ու քաղաքի օկուպացիոն իշխանություններին:

«Իմ կարծիքով, սա ռուսական ոգու մասին պատմություն է: Երբ մարդը երկար ժամանակ գտնվում է հարմարավետ պայմաններում, նրա մոտ գոյապայքարի զգացողությունը սկսում է բթանալ: Մարդը, նույնիսկ կարելի է ասել, սկսում է լճանալ, քայքայվել ու արտակարգ իրավիճակներում հայտնվելով՝ կարող է կոտրվել: Սակայն եթե մարդն ունի նպատակ, խիզախություն, ոգին ուժեղ է, ապա կարող է անցնել դժոխքի միջով ու հաղթող դուրս գալ: Նա, ով չի կոտրվում, կարող է հաղթող դուրս գալ այդ գոյապայքարում»,- ասում է սերիալի ռեժիսոր Սերգեյ Չեկալովը: Գլխավոր դերակատար Ալեքսանդր Ուստյուգովն էլ կարծում է, որ պատմական կինոնախագծերում ամեն բան հեշտ չէ՝ անհրաժեշտ է կառուցել դեկորացիաներ, պատրաստել ահռելի քանակությամբ կոստյումներ: Ամեն բան պետք է լինի ճշմարտացի: Կինոդիտողը պետք է տեղափոխվի այդ ժամանակներ եւ իրեն զգա տվյալ ժամանակի միջավայրում: Նկարահանումների ժամանակ աշխատել են նաեւ պատմաբաններ ու ռազմական խորհրդատուներ: Ուստյուգովը հիացած է իր մարմնավորած կերպարով: Կարծում է, որ Ներատովը չափազանց ուժեղ ու կամային հերոս է, որը կարողանում է առաջնորդել Կոստանդնուպոլսի ռուսական էմիգրացիան եւ այդ պատասխանատվությունը կրել պատվով: Սերիալը նկարահանվել է Մոսկվայում, Պետերբուրգում, Վիբորգում եւ Բաքվում: Կոստանդնուպոլսի տեսարաններին ամենից մոտիկը համարվել են Բաքվի փողոցները, որոնք դարձել են «կենդանի դեկորացիաներ»:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱ՛Մ ԵՍ ՆՐԱՆ ԽԵԼՔԻ ԿԲԵՐԵՄ, ԿԱ՛Մ ՆԱ ԻՆՁ ԿՏԱՆԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՄՈՏ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Տիկոլ Փաշինյանի՝ արդեն սովորական դարձած առավոտյան խեղկատակությունը, էն, որ սրտիկ-մրտիկ է անում ու ասում. «Բարի լույս, լավ օր եւ սիրում եմ բոլորիդ», ինձ հիշեցնում է 21 թվականի մի տխուր օր, երբ Սյունիքի գյուղերից մեկում Փաշինյանն իջավ ավտոյից ու դիմեց ժողովրդին՝ բարի օր, ժողովուրդ ջան: Ժողովուրդն էլ տարավ-բերեց ու… «Բարեւ, բ…ի տղա»… Ես ո՛չ բառ եմ ավելացրել, ո՛չ որեւէ բառ հանել: Ամեն ինչ տեղի է ունեցել հենց այդպես:

Վերջը Նիկոլի ախրանկան խառնվեց իրար, մարդ-մուրդ բռնեցին, թե՝ սրանք հատուկ ուղարկված մարդիկ են, որ եկել են՝ խանգարեն վարչապետի քարոզարշավը: Մեր պատմության մեջ այդ դեպքն իսկապես եզակի էր, իսկ 21-րդ դարում, դուք էլ գիտեք, շատ ժամանակ պետք չէ, որ հեռավոր գյուղում հնչած արտառոց եւ արտակարգ խոսքը դառնա մեծ քաղաքների բնակչության բերանի ծամոն: Օրեր անց այդ «թեւավոր խոսքն» արդեն հնչում էր Երեւանի հրապարակներում, փողոցներում եւ անգամ դատախազության շենքի մոտ:

Ոմանց կարծիքով՝ Սյունիքում հնչած այդ արտահայտությունը շատ տգեղ էր, համարյա՝ քֆուր: Ես համաձայն չեմ: Այ, եթե դուք էլ մի քիչ առնչվեք մեր ժողովրդի բանահյուսական գոհարներին, վստահ եմ, կհամոզվեք, որ «բ…ի տղա» արտահայտությունը քֆուր չէ, այլ՝ ժողովրդական լեզվամտածողության արգասիք: Ավելին ասեմ՝ բանահավաքության իմ պրակտիկայում ես նկատել եմ, որ հատկապես կին պատմողներն ու ասացողները (մեր տատիկները) շատ ավելի «բաց» տեսարաններ են նկարագրում, քան այն, ինչ ժողովրդի հոգու խորքից ասվեց Նիկոլին՝ Սյունիքում, ապա՝ Երեւանում: Ես չեմ ասում, որ ինչ-որ մեկին կարող է հաճելի լինել այդ «պիտակը», բայց դուք չեք կարող ինձ համոզել, որ դա քֆուր է, էն էլ՝ «մոր քֆուր»:

Բազմաթիվ են դեպքերը, երբ մեկի մասին ասում էն. «Արա, բայց շատ բ..ի տղա ա, է»: Ընկալվում եք՝ ինչ եմ ասում: Այսինքն, «բ…ի տղա»՝ նշանակում է «այլանդակ լակոտ», շրջապատում չսիրված, չընդունված, չուտվող, արգահատելի, մերժելի, անգամ՝ զզվելի: Այսպիսի մարդուն «բ…ի տղա» ասողները, վստահաբար, նկատի չունեն նրա մորը, նույնիսկ չեն էլ ճանաչում այդ կնոջը: Քիչ ճիվաղներ կան էս կյանքում եւ հատկապես Նիկոլի շուրջ, որոնց մայրերը պարկեշտ կանայք են: Դուք ճանաչո՞ւմ եք նրանց: Իհարկե՝ ոչ: Բայց գրեթե բոլորին էլ ասում եք «բ…ի տղա», չէ՞: Այ, հենց դա եմ ուզում ասել, որ նույնիսկ ամենապարկեշտ կնոջից կարող է տղա երեխա ծնվել ու հետագայում դառնալ «բ…ի տղա»: Եվ, ուրեմն, եթե որեւէ գյուղում, մեծ քաղաքի փողոցներում, հրապարակներում կամ դատախազության շենքի մոտ ինչ-որ մեկի հասցեին ժողովուրդը բղավում է «բ…ի տղա», նշանակում է՝ պրոբլեմ ունի ոչ թե այդ տղայի մայրը, այլ՝ հենց այդ անտանելի տղան: Պայմանավորվեցի՞նք… Շատ լավ:

Իսկ հիմա գանք Նիկոլի ամենօրյա սրտիկներին եւ «բարի լույս, լավ օր եւ սիրում եմ բոլորիդ» արտահայտությանը: Ի՞նչ եք կարծում՝ Փաշինյանն ամեն օր կրկնո՞ւմ է այդ ժեստը, թե՞ մի անգամ նկարել է ու անընդհատ նույն կլիպն է դնում: Նրա սառած եւ ամենօրյա նույն հիմար հայացքը հուշում է, որ դա նախապես նկարված կադր է: Գուցե ինձ է թվում, չգիտեմ: Բայց դա դեռ ամենակարեւորը չէ: Դուք դալշե լսեք: Ինչո՞ւ է ամեն առավոտ նրա տված «բարի լույսն» ինձ հիշեցնում Սյունիքի գյուղերից մեկում տեղի ունեցած այն արտառոց եւ արտակարգ դեպքը: Պարոն Փաշինյան, Դուք պատահաբար չունե՞ք այս հարցի պատասխանը: Բա ամեն օր ինձ ասում ես «բարի լույս»… Իսկի մտքովդ չի՞ անցնում, որ ես քեզնից զզվում եմ, երեսդ չեմ ուզում տեսնել, էլ ուր մնաց, որ նույն հիմար դեմքով քեզ պատասխանեմ՝ «բարի լույս»: Բնական չէ՞, որ պիտի այլ կերպ պատասխանեմ քո այդ խեղկատակությանը: Մի անգամ արդեն ասել եմ՝ դու դատարկ տեղ ես, դու չկաս ինձ համար, դու ինձ մի սիրի… Ուզում ես ինֆարկտի՞ հասցնել ինձ: Արդեն երկուսն ունեմ, այ արգահատելի երեւույթ, գոնե այնպես արա, որ միայն ընկերներդ տեսնեն այդ ապուշությունը:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 13.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՉՊԱՅՔԱՐՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Որքան հասկանում եմ, կա երկու բան, որոնք այսօրվա Հայաստանն իրավունք չունի անել: Առաջինը՝ նա չի կարող իր աշխարհագրության դեմ պայքարել, չի կարող այսպես՝ իր աշխարհագրությանը պատերազմ հայտարարած շարունակել ապրելը: Եվ երկրորդը՝ նա չի կարող համահայկական միասնության դեմ գործել, չի կարող այդ միասնության վերականգնման համար իրական քայլեր չձեռնարկել:

Այս իմաստով, Ադրբեջանի կողմից հայկական բեռների տեղափոխման արգելքի վերացումն իրոք որ պատմական իրադարձություն է: Բայց այստեղ պատմականը ո՛չ կոմունիկացիաների դիվերսիֆիկացումն է, ո՛չ էլ Ադրբեջանով հազար կամ երկու հազար տոննա հացահատիկի տեղափոխումը: Այստեղ«պատմականը Հայաստանի Հանրապետության՝ իր աշխարհագրության դեմ չպայքարելուն սովորելն է:

Իհարկե, այս երկրի՝ իր սեփական աշխարհագրության դեմ չպայքարելը նաեւ Արեւելք-Արեւմուտքը Հյուսիս-Հարավին չհակադրելն է, նաեւ՝ Արեւելք-Արեւմուտքը Հյուսիս-Հարավի հաշվին չբացելն է: Բայց այն նաեւ Արեւելք-Արեւմուտքը չբացելու, այն բաց պահվող քաղաքականություն չունենալու մասին չէ: Այն երկրին ու նրա կոմունիկացիաները բացելու, երկրի աշխարհագրության ընձեռած հնարավորությունները երկրի հզորացմանը ծառայեցնելու մասին է:

Այս իմաստով, Ռուսաստանից եւ Ղազախստանից Հայաստան հացահատիկ տեղափոխելով ո՛չ Ադրբեջանը եւ ո՛չ էլ Հայաստանը պատմություն չկերտեցին: Ուղղակի Ադրբեջանն ու Ադրբեջանի այդպիսի նախաձեռնությանն աջակցող ուժի կենտրոններն իրենց այդ քայլով ապացուցեցին, որ հասկացել են՝ տարածաշրջանում բոլորի համար անընդունելի նոր պատերազմ թույլ չտալու համար ոչ միայն Ադրբեջանի, այլ նաեւ Հայաստանի խոսքն է կարեւոր:

Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մենք այստեղ՝ Հայաստանում, պետք է հասկանայինք, ու կարծում եմ՝ հասկացանք, որ երբ մենք մեր աշխարհագրության դեմ չենք կռվում, երբ մեր աշխարհագրությանը պատերազմ չենք հայտարարում, այդքանը բավական է, որպեսզի մեր շուրջը մի նոր տնտեսական ու քաղաքական միջավայր ձեւավորենք, որպեսզի մի նոր տրամաբանությամբ ապրող երկիր, տնտեսություն ու քաղաքականություն ունենանք:

Սակայն մենք չենք կարող ու երբեք չպետք է մոռանանք նաեւ այն, թե այս երկիրն ու նրա աշխարհագրությունը, այս պետությունն ու պետական այս հսկայական ապարատը հայ մարդու ու հայության ինչին են պետք: Պետք է հասկանանք, որ դրանք նրանց պետք չեն միայն իրենց կենսաբանական պահանջները բավարարելու ու իրենց ամենօրյա բարեկեցությունը սպասարկելու համար: Դրանք նրանց պետք են իրենց հայկականությունը պահպանելու ու պաշտպանելու, ամեն օր այս տարածաշրջանը հայության ու հայկականի համար ավելի հարմար տարածաշրջան դարձնելու համար:

Հետեւաբար, մեր բոլոր կառավարություններն ու էլիտաները միշտ պետք է հիշեն, որ հայկական պետությունը չի կարող միայն աշխարհագրության, միայն ճանապարհների ապաշրջափակման կամ Ադրբեջանով ու Թուրքիայով մեկ կամ մի քանի հազար տոննա հացահատիկ տեղափոխելու մասին լինել: Հայկական պետությունը հայության պաշտպանության, մեր պատմության, մեր եկեղեցու, մեր լեզվի ու ավանդույթների, մեր այսօրվա ու գալիք բոլոր ձեռքբերումների ու նվաճումների մասին ու դրանց համար պետք է լինի:

Մենք ու մեր բոլոր էլիտաները մեկընդմիշտ պետք է հասկանանք, որ այնքան, ինչքան մեր աշխարհագրությանը պատերազմ չհայտարարելը՝ նրա դեմ չկռվելը, նույնքան, իսկ առանձին դեպքերում գուցե դրանից էլ ավելի, մեր ազգային ինքնության ու համահայկական միասնության դեմ չգործելն է կարեւոր: Այս պետությունն ու իր համապատասխան համակարգերը, ի վերջո, պիտի հասկանան, որ ինչքան էրդողանների ու ալիեւների, այդքան էլ նիկոլների ժամանակներն են անցողիկ: Իսկ մնայունը, ավելին՝ միակ մնայունը հայ ժողովուրդն ու Հայաստանն են: Հայ ժողովուրդն ու Հայաստանը, որոնց լավ ժամանակները դեռ նոր են գալու: Մենք մեր գալիք ձեռքբերումներն ու հաղթանակները դեռ նոր ենք տոնելու:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am